

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Պատերազմը Չէ Աւարտած Տակաւին

44-օրեայ պատերազմի ավարտէն տարի մը ետք պատերազմական գործողութիւնները կը շարունակուին, այս անգամ տեղափոխուելով Հայաստանի տարածք, ուր թշնամին կը մղէ «սպառնումի պատերազմ»՝ ռազմական ու հոգեբանական առաւելագոյն ճնշում բանեցնելու միջոցաւ օրակարգ վերադարձնելու համար «Ձանգեզուրի Միջանցքի» իր պահանջը, յատկապէս այն բանէն ետք, երբ Ռուսաստան արտայայտուեցաւ հաղորդակցութեան միջոցներու ապաշրջափակման եւ ճանապարհներու բացման Հայկական կողմի տեսակէտներուն հետ, որ այդ միջոցները պէտք է մնան իւրաքանչիւր պետութեան ինքնիշխանութեան տակ:

Այլեւս յստակ է որ, միջանցքի հարցը ոչ միայն Պաքուի պահանջն է, այլ առաւել եւս Թուրքիոյ: Իսկ Ալիեւ չի կրնար մերժել իր մեծ եղբօր՝ Էրտողանի պայմանները, նկատի առնելով որ, անոր կը պարտի Արցախեան վերջին պատերազմի յաղթանակը:

Անցեալ շաբաթ, Պոլսոյ մէջ կայացած թրքալեզու երկիրներու համագործակցութեան համաժողովի ընթացքին Ազերի եւ Թուրքիոյ ղեկավարները փորձած են միջանցքի գաղափարը «ծախել»՝ նաեւ նախկին Խորհրդային Միութեան թրքալեզու երկիրներուն, որպէս այդ աշխարհը իրար կապող միջոց: Իսկ, այդ երկիրները իր հովանիին տակ առնելու գաղափարը եղած է Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան կարեւոր ուղղութիւններէն մէկը՝ Խորհրդային Միութեան փլուզումէն ասդին, սակայն առանց հասնելու մեծ յաջողութիւններու՝ այդ երկիրներու զգուշաւոր վերաբերմունքին պատճառաւ:

Յստակ է որ, լայնածաւալ պատերազմէն տարի մը ետք Հայկական բանակը տակաւին չէ կարողացած ամրապնդել սահմանային իր սոր դիրքերը, որոնց կառուցումը եւ սպասարկումը կը կարօտի անելի երկար ժամանակի՝ նաեւ լեռնային պայմաններուն պատճառաւ: Ատրպէյճան օգտագործելով առիթը կը շարունակէ ներթափանցել Հայաստանի ինքնիշխան տարածքէն ներս ու պիտի շարունակէ այդպէս վարուիլ մինչեւ այն ատեն որ, զինք զսպող ու ետ մղող ուժ մը չկայ:

Հայաստան դիմած է Ռուսաստանին որպէսզի ան կատարէ 1997-ին, երկու երկիրներուն միջեւ կնքուած պայմանագրով իր


Մայիսի 12-էն Ասդին Ատրպէյճան Բռնագրաւած է Հայաստանի Շուրջ 41 Քառակուսի Քմ. Տարածք. Փաշինեան

Նոյեմբեր 16-ին, ՀՀ Պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդեց, որ ատրպէյճանական ՁՈՒ ստորաբաժանումները յարձակում գործած են արեւելեան սահմանագոտի տեղակայուած հայկական դիրքերուն վրայ եւ հայկական կողմը դիմած է համարժէք գործողութիւններու:

Հայաստանի Ձինուած ուժերու 12 զինձառայող՝ 7 պայմանագրային եւ 5 ժամկէտային զերեվարուած են, յայտնած է Հայաստանի Պաշտպանութեան նախարարութիւնը:

Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ տեղի ունեցող իրադարձութիւններու լոյսն տակ, յաջորդական երկրորդ օրը ըլլալով տեղի ունեցած է ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի նիստ, որու ընթացքին բացման խօսքով հանդէս եկած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Երեքշաբթի, Նոյեմբեր 17-ի նիստին Փաշինեան մասնաւորապէս, ըսած է. «Այսօր ժամը 13-ի շրջանում Ատրպէյճանի ՁՈՒ ստորաբաժանումները յարձակում են գործել Հայաստանի արեւելեան



Վարչապետ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Անվտանգութեան Խորհուրդի նիստի ժամանակ

սահմանագծի ուղղութեամբ: ՀՀ Ձինուած ուժերը հակառակորդին հակազդելու գործողութիւններ են ձեռնարկել:

«Հակառակորդի կենդանի ուժին հասցուել է հական վնաս, ոչնչացուել է առնուազն 6 միաւոր զրահատեխնիկա: Մեր կողմէն կան զոհեր, որոնց վերաբերեալ կը

յայտնուեն ճշգրտուած տեղեկութիւններ:

«Տեղի ունեցողին կարող է տրուել միայն մէկ գնահատական, սա ուղիղ յարձակում է ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ: Մայիսի 12-ին մեկնարկած յարձակողա-

Շար.ը էջ 5

ԳՈՅԺ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ՝

ԸՆԿԵՐ ՀԵՐԻ ՏԻՐԱՄԵՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, Նոյեմբեր 11-ին, Փասատինայի մէջ:

Ընկեր Տիրամերեան եղած է ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ, ՍԴՀԿ-Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի երկարամեայ անդամ եւ ատենապետ:

ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ոչ Եւս Է ԸՆԿ. ՀԵՐԻ ՏԻՐԱՄԵՐԵԱՆ

Ցաւով վերահասու եղանք որ Ուրբաթ, Նոյեմբեր 11, 2021ին մահացած է գաղութիս ծանօթ անձնաւորութիւններէն ԸՆԿ. ՀԵՐԻ ՏԻՐԱՄԵՐԵԱՆ: Հանգուցեալը եղած է Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի եւ Կեդրոնական Վարչութեան անդամ: Ան մօտէն հետեւած է եւ սատարած Ս.Դ.Հ.Կ.ի հովանաւորութիւնը վայելող կարգ մը կառոյցներու կազմաւորումին եւ յառաջընթացին:

Մեր ցաւակցութիւնները հանգուցեալի այրիին եւ համայն հարազատներուն:

ՍԴՀԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆ

Փաշինեան Ընդունած է Ամերիկայի Նախագահի Հրահրը

Վարչապետ Փաշինեան Միացեալ Նահանգներու նախագահ՝ Պայտրուէն ստացած է «Յանուն ժողովրդավարութեան» գազաթնաժողովին մասնակցելու հրահրը եւ հաստատած է իր մասնակցութիւնը: Այս մասին Առաջին արտաքին տնօրէն Վարչապետ Փաշինեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան:

«Մենք ժողովրդավարութեան գազաթնաժողովին ընկալում ենք որպէս Հայաստանի ժողովրդավարութեան ուժեղացման հնարաւորութիւն եւ այդ նպատակի համար ենք ծառայեցնելու այդ համաժողովը», - ըսած է ան, պատասխանելով այն հարցին, թէ սա կրնա՞յ որեւէ կերպ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման հարթակ հանդիսանալ:

Նշենք, որ Ռուսաստանը, Թուրքիան եւ Ատրպէյճանը չեն հրահրուած համաժողովին:

Գազաթնաժողովը տեղի կ'ունենայ Դեկտեմբեր 9-10-ին: Յիշեցնենք, որ Պայտրուէնի նախագահի պաշտօնի իր առաջին արտաքին քաղաքական ելոյթով ըսած էր, որ Միացեալ Նահանգները կը վերադառնան համաշխարհային առաջնորդութեան՝ Չինաստանի եւ Ռուսաստանի գլխաւորած մենատիրական ուժերուն հակազդելու համար:

Շար.ը էջ 4

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՉՈՒ ԲՈՂԱՐԵԱՆՆԸ ԶՐԱՎԱՐԱԿԱԼ ԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՓԱՇԽՆԵԱՆԻՆ

ԷՄՍԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Նոյեմբերի 8-ին՝ Լեռնային Ղարաբաղում պատերազմի ավարտի ազդարարող եռակողմ յայտարարության ստորագրման տարելիցից մեկ օր առաջ Արցախի Ազգային անվտանգության ծառայության ղեկավար Ստեփան Բախչյանը, որ նույն օրը՝ ժամը 15:00-ի սահմաններում, Շուշի քաղաքի մատակարար խաչմերուկում ատրոպեյճանական կողմից կրակոցներ են արձակվել տուեալ վայրում ջրատար խողովակների վրայ աշխատանքներ կատարող քաղաքացիական անձանց վրայ: Ստեփան Բախչյանը հիշատակեց, որ սեղափոխվել չորս քաղաքացիական անձինք, որոնցից մեկը մահացել էր: Արցախից ստացուող հերթական սարսափելի լուրերից մի քանի ժամ անց Հայաստանի Ազատության հրապարակում «Հայաստան» դաշինքի հրահրած հանրահավաքը կայացավ: Հանրահավաքի ընթացքում մի քանի յուրօրինակ ակտիվների, ֆեյսբուքյան ուղիղ հեռարձակումների ներքոյ հասարակության մի մեծ հատված արդեն իսկ հանրահավաքի հարթակից ելույթ ունեցող ընդդիմադիրներին որակում էր՝ «Չուր ծեծող», «ճառասող, բայց զանգ չկախող», նրանց մեղադրում էր՝ «քաղաքական պայքարի իմիտացիայով» զբաղվելու մեջ: Դեռ մինչև հանրահավաքն արդեն իսկ կրքերը բորբոքվել էին համացանցային տիրույթում: Ընդդիմադիր տարբեր թեմեր միմեանց արդեն մեղադրում են իշխանությանը ծառայելու մեջ, եւ վստահաբար Նոյեմբերի 8-ի հանրահավաքից յետոյ միմեանց «մերկացնող» քննադատությունները կը շարունակուեն նոր թափով ծառայուելի համացանցում:

Հայ հասարակության ղեկավար մասը, որը իշխանության փոփոխություն է տեսնում՝ մեկ ընդ միշտ պետք է գիտակցի, որ Ռոբերտ

Քոչարեանը զբաղվում է քաղաքականությունում, բայց ընդդիմադիր առաջնորդ չի կարող դառնալ՝ մի քանի պատճառներով:

Նախ, Ռոբերտ Քոչարեանը խարիզմատիկ գործիչ չէ, նրա 5, 10, 20 կամ 30 րոպեանոց ելույթները Ազատության հրապարակից չեն կարող համացանցով հանրահավաք

է, որ դա ընդդիմադիր առաջնորդի համար բաւարար չափանիշ չէ: Այս քանն ընդդիմադիր առաջնորդ դառնալու, այսպէս ասած՝ կարեւոր չափանիշների մասին, որոնք բացակայում են Քոչարեանի մօտ:

Բայց գոյություն ունի առաւել կարեւոր հանգամանք՝ քաղաքական, գաղափարական «կերակու-

Հասարակութեան մի մեծ հատված արդեն իսկ հանրահավաքի հարթակից ելույթ ունեցող ընդդիմադիրներին որակում էր՝ «Չուր ծեծող», «ճառասող, բայց զանգ չկախող», նրանց մեղադրում էր՝ «քաղաքական պայքարի իմիտացիայով» զբաղվելու մեջ

ղիտող, տանը նստած միջին վիճակագրական քաղաքացուն տնից դուրս հանել ու բերել Ազատության հրապարակ: Անշուշտ, Քոչարեանն ունի համակիրները բանակ եւ նրանք Քոչարեանի կողմից հրահրուելիք առաջիկայ հնարաւոր բոլոր ցոյցերին ու հաւաքներին կը մասնակցեն: Բայց խօսքը հասարակական մեծ, տարբերակներով կանխորոշիչ ակտիվ մասին է, որը Քոչարեանը չի կարող ապահովել, ոչ թէ, որ չի ցանկանում, այլ, որովհետեւ նա նախ դրա ձիրքը չունի: 2008թ. նախագահական ընտրություններից յետոյ, օրինակ, ՀՀ առաջին նախարարի ղեկավար ընտրվել, նրա հակամարտված, բովանդակային ելույթների արդիւնքում ձմրան խստաշունչ օրերին Ազատության հրապարակում նրա համակիրներն անգամ գիշերում էին:

Ռոբերտ Քոչարեանն, ըստ նրան լաւ ճանաչողներին՝ հմուտ մենեջեր է, կազմակերպչական բարձր ունակությունների տէր մարդ, իսկ դա նշանակում է, որ նա կարող է յաջողել կազմակերպչական տարբեր հարցերում, բայց, վստահաբար, ինքն էլ գիտակցում

ըր», որով ընդդիմադիր առաջնորդը պետք է զբաղեցնի Հայաստանի՝ իշխանությունից դժգոհ հասարակությանը: Առանց չափանցությունների ու ծայրայեղականացման խօսակցության թեման, մի քանի հոստոթական հարցեր տանք ինքներս մեզ. Քոչարեանը Փոլիտիկա, Փաշինեանի ու Ալիևի ստորագրած յայտարարությունները դէմ է, թէ՞ դէմ է, որ այդ փաստաթուղթը Փաշինեանն է ստորագրել: Քոչարեանը, եթէ Փաշինեանին համարում է «կապիտուլիացի» ստորագրող ղեկավար, նա պետք է հասարակութեանը բացատրի, թէ ինչո՞ւ է այնպէս ստացուել, որ մինչև ոչ վաղ անցեալում Հայաստանի դաշնակից համարուող Ռուսաստանն այսօր լուրջ թիւն է պահպանում, երբ Արցախում եւ Հայաստանի սահմաններին հայեր են սպանւում ատրոպեյճանական կողմի կրակոցներից: Եթէ Քոչարեանը դէմ է Նոյեմբերի 10-ի եռակողմ յայտարարությանը, նա պետք է պահանջի այդ փաստաթուղթը չեղեալ յայտարարել՝ այդ յայտարարության երաշխաւոր Մոսկուայից, այլ ոչ թէ կանխատեսի, որ Հայաստանի կողմից յաջորդիւ ստորագրուելիք

փաստաթղթերը կործանարար հետեւանքներ կարող են ունենալ Հայաստանի անվտանգության համար: Կանխատեսումներ անելն ու դրանց հիմքում արձանագրումներ անելը փորձագետների գործն է, Քոչարեանը որպէս ընդդիմադիր գործիչ պետք է գործի, ընդդիմանայ Հայաստանին դէմ դաւադրութիւնների այս շարանին: Նա գոնէ պետք է փորձի դա անել՝ մտքում, իհարկէ, ունենալով ու չբացաւելով տարբերակը, որ կարող է եւ շատացուել, բայց նա չի էլ փորձում դա անել:

Վստահաբար, Քոչարեանը հասկանում է, որ Փոլիտիկա համար Փաշինեանն իսկապէս «իմաստուն» գործիչ է, բայց Քոչարեանը չի կարող դա ասել Ազատության հրապարակից: Գրեթէ երկու տասնամեակ, Ռուսաստանն անկեղծօրէն հասկացնում էր պաշտօնական երեւանին, որ ցանկանում է ԼՂ խնդրի կարգաւորում, առաջարկներ էր մշակում, կողմերին էր ներկայացնում դարաբաղեան կարգաւորման տարբերակի վերամշակումներ, բայց չգիտես ինչու, շատերին թւում էր, թէ Ռուսաստանն իրականում չի ցանկանում ԼՂ խնդրի լուծում, որպէսզի այս տարածաշրջանում պահպանի իր ազդեցութիւնը, ու այստեղ Արեւմուտքի հաշուարկներն էլ ճիշտ չէին: Պարզուեց, սակայն, որ Մոսկուային պետք էր ազդեցութեան մեծացում՝ նոյնիսկ այս գնով:

«ԱՌԱԻՕՏ»
Յապաւումներով

ՊԱՎԻԿԵԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՈՎ ՓԱՇԽՆԵԱՆՆԸ ԳՆՈՒՄ Է ԿՏՐՈՒԿ ՌԵՖՈՐՄԻ ԵՆ ԶՐԱԺԱՐՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՈՐՂԵԳՐԱԾ ՊԱՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՋՈՆԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Պատերազմից յետոյ վարչապետ Փաշինեանը մի քանի անգամ յայտարարել է, որ իրենք, իշխանությունն զալով, որդեգրել են բանակին ոչ մի առումով ձեռք չտալու քաղաքականություն, այսինքն՝ գերծ են մնացել բանակում կազմակերպի կտրուկ փոփոխություններից, համակարգից դուրս գտնուողներին համակարգ բերելուց եւ քաղաքական նշանակումներից, միայն կատարել են բանակի կարիքների բաւարարում: Սա է հենց պատճառը, որ բանակում փաստացի ոչ մի ռեֆորմ (բացի սնունդն ու հագուստը) չի կայացել:

Շատերը կարծում էին, որ այս խոստովանությունից յետոյ գոնէ վարչապետը կը գնայ կտրուկ կազմակերպի փոփոխությունների, բայց դրան յաջորդեց Արշակ Կարապետեանի նշանակումը:

Ռազմական կրթություն էլ պետք է հասկանալու համար, որ համակարգը համակարգի ներսի մասնիկներով բուժել հնարաւոր չէ եւ միջամտությունը պետք է դրսից անել, այսինքն՝ գնալ կազմակերպի

կտրուկ փոփոխությունների: Այս առումով Պաշտպանության նախարարի քաղաքական պաշտօնը ՔՊ կուսակցության վարչությունն նախագահ Սուրէն Պապիկեանին վստահելը կարեւորագոյն եւ բոլոր առումներով լաւ որոշում է:

Նախ՝ Պաշտպանության նախարարը քաղաքական պաշտօն է, փաստացի մարտական պայմաններում զօրքերի հրամանատարությունը մնում է ԳՇ պետի վրայ, որը բնականաբար զինուորական է, գեներալ: Բայց այս բանակաշինության, դրանում մօտեցումները, զինուորականների հետ տարուող աշխատանքների մասով մօտեցումները պիտի լինեն քաղաքական ու յստակ ռեֆորմիստական:

Այս առումով Պապիկեանը իրեն հրաշալի է դրսեւորել Տարածքային կառավարման նախարարի պաշտօնում: Տարիներով ամենակրուում պացուած համակար-

գից Պապիկեանը կարճ ժամանակում ստացաւ ժամացոյցի պէս աշխատող մեխանիզմ, որի աշխատանքի արդիւնաւետութիւնը ժամանակին ընդունել են անգամ ամենատարբեր ընդդիմադիրները:

Կարեւոր է նաեւ անձնային խառնուածքը, այս առումով էլ Պապիկեանը ՔՊ-ում համարում է ամենախիստ եւ պահանջկոտ գործիչներից մեկը, պատահական չէ, որ ՔՊ վարչության ընտրություններում վարչապետից յետոյ երկրորդ ամենաշատ ձայնը հենց նա էր հաւաքել կուսակցության ներսում:

Եթէ ամփոփելու լինենք, ապա միանշանակ է, որ այս նշանակումը վաղուց էր հասունացելու անգամ փոքր ինչ ուշացած է, ակնյայտ է նաեւ, որ Պապիկեանը ոչինչ չի խնայելու այս նշանակումը արդարացնելու համար, եւ որ բանակային ռեֆորմները սկսուելու են շատ արագ:

«CIVIC.AM»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետոմսը արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԵՆՔ ԱՄԵՆ ՏԵՂ ՉԷ, ՈՐ ՊԻՍԻ ՅԱՊԵՆՔ. ՓԱՇԻՆԵԱՆ



Վարչապետ Փաշինեանը ելոյթ կ'ունենայ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան դրամահաւաք ժամանակ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ՏԻՄ ընտրութիւններու քարոզարշաւի կապակցութեամբ կազմակերպուած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան դրամահաւաք երեկոյին ելոյթ ունեցած է՝ ըսելով:

«Երբ քննարկում ենք ՏԻՄ ընտրութիւնները, մենք արձանագրում ենք, որ ամէն տեղ չէ, որ պիտի չաղթենք: Սա նրանից չէ, որ մենք յաւակնոտ չենք բառիս լաւ իմաստով, մեր քաղաքական յաւակնութիւնների կամ մեր նպատակադրումների ու վճռականութիւնների նուազել է: Ընդհակառակը, դա նրանից է, որ մեր քաղաքական վճռականութեան սկզբունքայնութեան նշանակումը ամէն անգամուայ հետ աւելի ու աւելի բարձր է լինում, որովհետեւ նոյնիսկ այն համայնքներում, որտեղ ՔՊ-ն պարտուած է, այդ համայնքներում ՔՊ-ն յաղթում է, որովհետեւ ՔՊ-ն իշխանութեան է եկել համար մէկ կարգախօսով, որ ժողովուրդը որոշող է, եւ ժողովուրդն այսօր գիտի, որ որոշող

է: Մենք չենք քննում՝ ժողովուրդը արդար որոշեց, թէ անարդար որոշեց: Այսօր ՀՀ իւրաքանչիւր քաղաքացի գիտի, որ իր ձայնը անձեռնմխելի է: Հետեւաբար՝ ՏԻՄ բոլոր ընտրութիւններում յաղթում է ՔՊ-ն, կառավարութիւնն է յաղթում, մեծամասնութիւնն է յաղթում, որովհետեւ այդ մեծամասնութիւնն է, որ ժողովրդի մանտաթով ապահովել է այսօրուայ վիճակը»,- ըսած է վարչապետը:

«Ով չգիտի, թէ ինչ կարող էր լինել խորհրդարանական ընտրութիւններում մեր պարտութեան պարագայում մենք բոլորս դա գիտէինք: Մարդիկ փողոցներում արդէն մեր ընտանիքների գնդակահարութիւններն էին բեմադրում, բայց մենք գնացել ենք այդ ճանապարհով, ասել ենք, որ եթէ ժողովուրդը որոշի, որ մեզ պէտք է գնդակահարել, մենք անմուռնչ կը կանգնենք գնդակահարութեան պատի տակ»,- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան դրամահաւաք երեկոյի իր խօսքին մէջ ըսած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Կապանի Մէջ Յաղթած Է Գործող Քաղաքապետը, Իջեւանի Եւ Ստեփանաւանի Մէջ՝ Քաղաքացիական Պայմանագիրը

Նոյեմբեր 14-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն, ըստ Կեդրոնական ընտրական յանձնաժողովի նախնական արդիւնքներուն, Կապանի մէջ յաղթած է գործող քաղաքապետ Գէորգ Փարսեանի գլխաւորած «Շանթ» դաշինքը՝ ձայներու կրկնակի առաւելութեամբ առաջ անցնելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան: Ստեփանաւանի եւ Իջեւանի մէջ բացարձակ առաւելութեամբ յաղթած է «Քաղաքացիական պայմանագիր»-ը: Կապանի մէջ «Շանթ» դա-

շինքը ստացած է ձայներու մօտ 69,5 տոկոսը՝ 13 հազար 962 քուէ, «Քաղաքացիական պայմանագիր»-ը՝ 5 հազար 791 ձայն (մօտ 28,8 տոկոս): Ստեփանաւանի մէջ «Քաղաքացիական պայմանագիր»-ը ստացած է քուէներու մօտ 78,4 տոկոսը՝ 4004 ձայն, «Բարգաւաճ Հայաստան»-ը՝ 705 ձայն (մօտ 13,8 տոկոս), Հայ ազգային քոնկրէսը՝ 218 (մօտ 4 տոկոս): Իջեւանի մէջ «Քաղաքացիական պայմանագիր»-ը յաղթած է մօտ 80,8 տոկոսով՝ ստանալով 10003 ձայն, Հ Յ Դ. ստացած է 1964 քուէ (մօտ 15,9 տոկոս):

Հայասանի Մէջ Պատուաստուածներու Թիւր Հասած Է Մէկ Սիլիոնի

Հայաստանի Մէջ COVID-19-ի Դէմ Պատուաստման Առաջին Դեղաչափը Ստացած Է Շուրջ 682 Հազար, Երկրորդը՝ 322 Հազար Մարդ: Հայաստանի մէջ Նոյեմբեր 14-ի դրութեամբ կատարուած է «Քորոնա» ժահրի դէմ 1 միլիոն 4 հազար 493 պատուաստում: Առողջապահութեան նախարարութեան հաղորդմամբ՝ առաջին դեղաչափը ստացած է 682 հազար 188, երկրորդ դեղաչափը՝ 322 հազար 305 մարդ:

Պաշտպանութեան Նախարարի Պաշտօնը Քաղաքական Է, Եւ Պապիկեանի Նշանակումը Հասկնալի Է - Գագիկ Մելքոնեան

«Պաշտպանութեան նախարարի պաշտօնը քաղաքական է, եւ իշխող ուժը պէտք է այդ պաշտօնում նշանակի նրան, ում վստահում է: Այդ առումով ինձ համար հասկանալի է Սուրէն Պապիկեանի նշանակումը Պ.Նախարարի պաշտօնում»,- Civic.am-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է ՊՆ նախկին փոխնախարար, ԱԺ-ի պատգամաւոր՝ Գագիկ Մելքոնեանը:

Յիշեցնենք, որ պաշտպանութեան նախարար Արշակ Կարապետեան ազատուած է գրաւած պաշտօնէն, եւ անոր փոխարէն վարչապետ Նիկոլ Փաշինեան ՊՆ աշխատակազմին ներկայացուցած է արդէն նախկին փոխվարչապետ՝ Սուրէն Պապիկեանը:

Արայիկ Յարութիւնեան Ուղերձ Յղած Է

Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան ուղերձ յղած է արցախեան վերջին պատերազմի ռազմական գործողութիւններու դադրեցման մէկ տարուայ կապակցութեամբ: «Արմէնփրէսի» հաղորդմամբ, Արայիկ Յարութիւնեան ընդգծած է, որ այդ ընթացքին ամենօրեայ ռեժիմով Արցախի իշխանութիւնները, ՀՀ ու Սփիւռքի աջակցութեամբ եւ ՌԴ խաղաղապահ զօրակազմի հետ համագործակցութեամբ, կը ջանան լուծել պատերազմի հետեւանք հանդիսացող տարաբնոյթ խնդիրները՝ ռազմա-քաղաքական, անվտանգային, ընկերա-տնտեսական եւ այլն:

«Երբեմն ունենում ենք իրավիճակներ, երբ ատրպէյճանական կողմը խախտում է ինչպէս բարձր մակարդակով մէկ տարի առաջ ստորագրուած յայտարարութեան դրոյթները, այնպէս էլ՝ առօրեայ աշխատանքներին վերաբերող պայմանաւորուածութիւնները: Այդպէս է շփման գծում հրադադարի խախտումները դէպքում, այդպէս է վերջին երկու դէպքում, երբ գոհունեցին ու վիրաւորուեցին քաղաքացիական անձինք: Ատրպէյճանի բացայայտ անբեկութեան թիրախում Արցախի Հանրապետութեան քաղաքացիներն էին, ինչպէս նաեւ՝ ՌԴ խաղաղապահները, նպատակը խուճապային տրամադրութիւններ սերմանել Արցախում ապրողներին շրջանում, եւ, ի հարկէ, փորձել հեղինակազրկել ռուսական խաղաղապահ զօրակազմի առաքելութիւնը»,- նշած է Արայիկ Յարութիւնեան:

Արցախի նախագահը ներկայացուցած է, թէ այս ժամանակամիջոցին ինչ կատարուած է ԱՀ Պաշտպանութեան բանակի եւ խաղաղապահներու միջոցով ապահովուող հրադադարի ռեժիմը ամբիւրձանաբար եւ անվտանգային միւս խնդիրները լուծելու համար: Կատարուած են փոփոխութիւններ զինքի մասին օրէնքի մէջ, որոնք կ'ընդլայնեն զինքի ձեռքբերման



ԱԺ-ի պատգամաւոր՝ Գագիկ Մելքոնեան

խիկ նախարարութիւնը կատարի այդ պահանջարկը: Սա է հիմնական խնդիրը: Պապիկեանն էլ արդէն ցոյց է տուել, թէ ինչպէս է աշխատում: Թէ՛ տարածքային կառավարման նախարար եղած ժամանակ, թէ՛ փոխվարչապետ եղած ժամանակ ցոյց է տուել, որ կարողանում է աշխատել, ունակ է, արդարացրել է իրեն: Հետեւաբար նորմալ եմ համարում այդ նշանակումը»,- ըսաւ Մելքոնեան:



Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան

հնարաւորութիւնները: Թէեւ առ այսօր շօշափելի աշխատանք տարուած է շփման գծին յարակից բնակավայրերու մէջ մշտական իրիւտած հսկողութիւն ապահովելու առումով, սակայն, ըստ Արայիկ Յարութիւնեանին, այսուհետ իրաւապահ մարմիններու կազմէն ներս գործող համապատասխան ստորաբաժանումները աւելի մեծ մասնակցութիւն կ'ունենան շփման գծին մօտ տարածքները կատարուող աշխատանքներու, բնակավայրերու ու ճանապարհներու անվտանգութեան ապահովման գործով: Նախագահը այդ առումով խնդրած է բոլոր քաղաքացիներէն ու կազմակերպութիւններէն նշուած տարածքները աշխատանքներ կատարելու պարագային դիմել ԱՀ ազգային անվտանգութեան ծառայութիւն: Գործադրուող ջանքերի համար մէկ անգամ եւս շնորհակալութիւն եմ յայտնում Արցախում ռուսական խաղաղապահ զօրակազմին, հրամանատարութեանը եւ անձամբ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութինին»,- ըսուած է ուղերձով:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Չմտաւ Ատրպէյճանի՝ Միջանցքային Տրամաբանութեան Մէջ. Ռուբէն Ռուբինեան



Ազգային ժողովի փոխնախագահ՝ Ռուբէն Ռուբինեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին

«Հայաստանը չմտաւ Ատրպէյճանի՝ միջանցքային տրամաբանութեան մէջ», «Ազատութիւն»-ի «Հարցազրոյց Կարլին Ասլանեանի հետ» հաղորդման ժամանակ ըսաւ Ազգային ժողովի փոխնախագահ՝ Ռուբէն Ռուբինեանը՝ անդրադառնալով Գորիս-Կապան ճանապարհի 21 քիլոմետրանոց հատուածին Ատրպէյճանի տեղադրած անցակէտին:

Ռուբինեան ընդգծեց՝ «Դա այն է, ինչ ուզում է Հայաստանը, Հայաստանի ուզածն է եղել միշտ եւ շարունակում է լինել»: «Ատրպէյճանն այս ընթացքում յաճախ փորձել է տարբեր քննարկումներում ներկայացնել, թէ իբր Գորիս-Կապան ճանապարհի այդ 21 քիլոմետրանոց հատուածը մեծ հաշուով իրենց տուած ճանապարհն է, կամ իրենց տուած միջանցքն է, որի դիմաց իրենք ուզում են ստանալ այսպէս կոչուած միջանցք, եւ թերեւս վերջին գարգացումների եւ հաստատումների արդիւնքն է նաեւ, որ Ատրպէյճանը գնաց այսպիսի որոշման, ինչը, բնականաբար, որոշակի դժուարութիւններ առաջացնում է», - ըսաւ Աժ-ի փոխնախագահը՝ նշելով, որ Ատրպէյճանի այս որոշումը Հայաստանի համար անակնկալ չէր՝ Հայաստանը պատրաստ էր նման գարգացումներու:

Ատրպէյճանի այս որոշումը որեւէ բնակավայր շրջափակման մէջ չէ յայտնուած եւ չի ալ յայտնուիր, այլընտրանքային ճանապարհը ե՞ւ ուղեւորներու, ե՞ւ բեռնատարներու համար անցանելի է եւ անցանելի պիտի ըլլայ,

ըսաւ Աժ փոխնախագահը՝ շեշտելով, որ վերջնականապէս կը հաստատուի, որ Ատրպէյճանը չէ յաջողած եւ չի յաջողիր ալ որեւէ միջանցքային տրամաբանութիւն ներմուծել տարածաշրջանային հաղորդակցութիւններու ապաշրջափակման քննարկումներուն եւ գործողութիւններուն մէջ:

Հարցին, թէ ի՞նչ ձեւաչափով այդ հարցը որոշուած է եւ ինչ-որ հարթակով մը քննարկու՞մ եղած է, որ պէտք է այդ մաքսակէտը տեղադրուի, Ռուբինեան պատասխանեց, որ այդ փոխհամաձայնութեան արդիւնք չէ:

Դիտարկման, թէ չքննարկելու դիմաց Ատրպէյճանը եւ թուրքիան կրնան վաղն ալ այլ սակարկելու թեմա ունենալ, Աժ փոխնախագահը արձագանգեց՝ «Այստեղ սակարկման խնդիր չկայ, վերջին իրադարձութիւնների շուրջ, որեւէ քննարկում չի եղել: Ես ասում եմ շատ պարզ բան՝ Հայաստանի Հանրապետութեան տրամաբանութիւնն է եղել եւ տրամաբանութիւնն է, որ բոլոր ճանապարհները, որոնք անցնելու են Հայաստանով եւ Ատրպէյճանով, պէտք է լինեն համապատասխանաբար Հայաստանի եւ Ատրպէյճանի ինքնիշխանութեան եւ ամբողջական վերահսկողութեան ներքոյ, եւ այդտեղ պէտք է տեղի ունենայ վարչարարութիւն համապատասխանաբար Հայաստանի եւ Ատրպէյճանի կողմից, սա մեր տրամաբանութիւնն է, մեր տրամաբանութիւնը չէ՞ միջանցքային տրամաբանութիւնը»:

Շարլ Միշել Կոչ Ըրած է Հայաստանին ու Ատրպէյճանին Դադրեցնելու Բախումները

Եւրոպական խորհուրդի ղեկավար՝ Շարլ Միշելը կոչ ըրած է Հայաստանին ու Ատրպէյճանին դադրեցնելու բախումները եւ այսպապաղ քայլեր ձեռնարկել՝ լարուածութիւնը թուլացնելու ուղղութեամբ:

«Կոչ կ'ընեմ հրատապ ապամազլցման եւ կրակի ամբողջական դադրեցման: Իրավիճակը տարածաշրջանին մէջ բարդ է: Եւրոպական Միութիւնը հաւատարիմ է գործընկերներու հետ աշխատելու



Եւրոպական խորհուրդի ղեկավար՝ Շարլ Միշել

տարածաշուկանները հարթելու համար, յանուն բարգաւաճող ու կայուն Հարաւային Կովկասի», -

Հայաստան Կը Դիմէ Ռուսաստանին՝ ՀՀ Տարածքային Ամբողջականութիւնը Պաշտպանելու Կոչով

«Հայաստանը դիմում է Ռուսաստանի Դաշնութեանը 1997 թուականից երկու երկրների միջեւ գործող պայմանագրի համաձայն՝ պաշտպանելու երկրի տարածքային ամբողջականութիւնը, քանի որ յարձակում է եղել Հայաստանի ինքնիշխան տարածքի վրայ», Նոյեմբեր 16-ին Հանրային հեռուստարկերութեան եթերով յայտարարեց Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան:

«Սա բանաւոր դիմում է, որը նաեւ զրաւոր ընթացակարգ է ունենալու, բայց մենք ուզում ենք հանրութեանը եւ մեր գործընկերներին տեղեկացնել, որ այսպիսի գործընթաց ենք սկսում», - նշեց Գրիգորեան:

Հայաստանը Ռուսաստանէն կ'ակնկալէ օգնութիւն տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու նպատակով, աւելցուց Գրիգորեանը. «Բազմաթիւ անգամ ընդհանրապէս խօսուել է, որ Հայաստանի Հանրապետութեան պետական սահմանը հանդիսանում է կարմիր գիծ Ռուսաստանի Դաշնութեան համար, եւ Մայիսի 12-ից սկսած ատրպէյճանցիները խախտել են այդ կարմիր գիծը: Այս առումով մենք մեր դաշնակցին դիմում ենք, որպէսզի մենք կարողանանք մեր դաշնակցային պարտաւորութիւնների շրջանակներում վերականգնել Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը»:

Ընդ որում, խօսքը միայն բանակցային մակարդակով օգնութեան մասին չէ, մանրամասնեց Ան քարտուղարը. «Եթէ բանակցային ճանապարհով հնարաւոր չի լինում լուծել, ապա տրամադրել Հայաստանին բաւական ռազմական օգնութիւն, որպէսզի Հայաստանը կարողանայ ստեղծուած իրավիճակը հանգուցալուծել»:

«Հայաստանն առաջնահերթ կարծում է, որ Ռուսաստանի Դաշնութեան եւ ՀԱՊԿ կառույցների միջոցով հնարաւոր է ձգնաժամը լուծել, բայց եթէ մենք չկարողանանք, ինչպէս բազմիցս արդէն



ՀՀ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան

նշել ենք, ստեղծուած ձգնաժամը լուծել գոյութիւն ունեցող կառուցակարգերով, ապա Հայաստանը ստիպուած է լինելու այլ կառուցակարգերին դիմելու, այսինքն՝ միջազգային այլ գործընկերներին դիմելու, որպէսզի ստեղծուած ձգնաժամը լուծենք, բայց մենք առաջնային ենք համարում այս պահին պայմանագրային պարտաւորութիւններով օժտուած այն մեքենականութիւնները, որոնք հնարաւոր է գործարկել եւ ստեղծուած ձգնաժամը լուծել, գործարկել առաջնային դրանք», - շեշտեց Անվտանգութեան խորհուրդի քարտուղարը:

«Գիտէք, որ առաջին քայլերը, երբ Ռուսաստանի Դաշնութեան կողմից հրապարակուեց այն փաստը, որ միջանցքի տրամաբանութեամբ որեւէ գործողութիւն չի լինելու, դրան հետեւեցին Կապան-Գորիս ճանապարհի հատուածների սկզբից փակումը, այնուհետեւ մաքսակէտեր տեղադրումը, դրան հետեւեցին նաեւ սահմանային լարումները: Ընդհանուր առմամբ, Ատրպէյճանը փորձում է խաղաղութեան կամ կայունութեան այն գործընթացը, որն ընթանում է, ամբողջովին ապակայունացնել եւ տարածաշրջանում ստեղծել անկայուն իրավիճակ», - ընդգծեց Արմէն Գրիգորեանը:

Ռուսական Կողմի Միջնորդութեամբ Սահմանագօտիին Վրայ Կրակը Դադրած է

Ռուսական կողմի միջնորդութեամբ ձեռք ձգուած պայմանաւորութեան համաձայն՝ Նոյեմբեր 16-ի, ժամը 18:30-ին ՀՀ արեւելեան սահմանագօտիին վրայ կրակը դադրեցուած է եւ իրադրութիւնը յարաբերականօրէն կայունացած է: Այս մասին տեղեկացուցին ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան:

Նոյն օրը ժամը 13:00-ի սահմաններուն, Ատրպէյճանի ԶՈՒ ստորաբաժանումները յարձակում գործած են սահմանի տուեալ ուղղութեամբ տեղակայուած հայկական դիրքերուն վրայ: Հակառակորդը կիրառած է նաեւ հրետանային միջոցներ, զրահներ եւ տարբեր տրամաչափի հրաձգային զի-

նատեսակներ: Հայկական կողմի պատասխան գործողութիւններու հետեւանքով հակառակորդը ունի կենդանի ուժի մեծաթիւ կորուստ, քանի մը միաւոր զինուորական սարքեր ոչնչացուած կամ շարքէ դուրս ելած են: Հայկական կողմը նոյնպէս կորուստներ ունի: Այս պահին ճշգրտած տուեալներ կան մէկ զոհի մասին՝ 1991-ի ծնունդ, պայմանագրային զինծառայող, շարքային Մերուժան Արթուրի Յարութիւնեան: Վիրաւորներու թիւը նոյնպէս կը ճշգրտուի: Եւս 12 զինծառայող գերեզմանուած է: Նոր տեղեկութիւններու պարագային պաշտպանութեան նախարարութիւնը հանդէս կու գայ համապատասխան հաղորդագրութեամբ:

զրած է Միշելը թուիթթրով: Եւրոպական Միութեան բարձրաստիճանի դիւանագէտը նաեւ նշած է, որ զրուցած է Հայաստանի

վարչապետին ու Ատրպէյճանի նախագահին հետ՝ տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակին շուրջ:

Ստորագրուած է Հայաստան-ԵՄ Ընդհանուր Օդագնացութեան Համաձայնագիրը



Արարատ Միրզոյեանը ԵՄ պաշտօնեաներուն հետ մէջ կ'ստորագրէ Հայաստան-Եւրոպական միութիւն օդագնացութեան համաձայնագիրը

Արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեանը ԵՄ պաշտօնեաներուն հետ Պրիւքսէլի մէջ ստորագրած է Հայաստան-Եւրոպական միութիւն ընդհանուր օդագնացութեան համաձայնագիրը:

«Մօտ ապագայում համաձայնագրի վաւերացումն ու ուժի մէջ մտնելը նոր հնարաւորութիւններ կը ստեղծի Հայաստանում օդագնացութեան ոլորտի զարգացման համար՝ դիւրացնելով Հայաստանի քաղաքացիներին կապը եւրոպական այլ երկրներին հետ», - յայտարարած է Արարատ Միրզոյեանը, հարգած է ԱԳՆ-ն:

ԵՄ ընդհանուր օդագնացութեան գօտիէն ներս՝ օդագնացութեան ծառայութիւններու միասնական շուկային միանալը, ըստ նախարարին, կը նպաստէ ԵՄ օդագնացութեան չափանիշներու ընդունման, օդագնացութեան կանոններու կիրառման եւ կը զարգացնէ հետագայ համագործակցութիւնը օդագնացութեան անվտանգութեան ոլորտին մէջ:

Այս ամէնէն կը շահին ազգային օդանաւային ընկերութիւնները եւ անհատ ճամբորդները, հաւաստիացուցած է նախարար Միրզոյեանը:

Ատրպէյճան Բռնագրաւած է Հայաստանի Տարածք

Շարունակուած էջ 1-էն

կան գործողութիւններին հետեւանքով Ատրպէյճանն բռնագրաւած է Հայաստանի շուրջ 41 քառակուսի քմ. ինքնիշխան տարածք: Միջազգային հանրութեան մեր գործընկերների լուծութեան պայմաններում Ատրպէյճանը շարունակում է իր յարձակողական գործողութիւնները: Իմ գնահատականը միանշանակ է, Ատրպէյճանը եւ նրան քաջալերող ուժերը թիրախաւորում են մեր ինքնիշխանութիւնը, մեր պետականութիւնը, անկախութիւնը:

Այո, մենք այսօր ծանր օր ենք ունեցել, ծանր ժամանակներ ենք ապրում, բայց այսօր նաեւ ցոյց ենք տուել, որ մենք այստեղ ենք, կանք, պետութիւն ենք, մենք պետական ազգ ենք եւ պարտադրանքի լեզուն մեզ համար անընդունելի է: Մենք կարող ենք բանակցել, կարող ենք փնտրել եւ գտնել փոխընդունելի լուծումներ, մենք մեզ պահում ենք որպէս միջազգային հանրութեան պատասխանատու անդամ, բայց մենք թոյլ չենք տալ մեզ հետ խօսել անբարտաւանութեան լեզուով:

«Միջազգային հանրութեանը կոչ եմ անում Ատրպէյճանի յարձակողականը դատապարտող հասցեական յայտարարութիւններ ընդունել: «Սահմանային վէճերի մասին խօսակցութիւններն անհեթեթ են եւ անիմաստ: Չկայ սահմանային վէճ, կայ Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ յարձակում: Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանները յստակ են դեռ խորհրդային Միութեան ժամանակներին ընդունած իրաւական պարտադիր ուժ ունեցող համա-

ձայնութիւններով:

«Եթէ խնդիրը սահմանային վէճը լինէր, Ատրպէյճանը վաղուց պէտք է ընդունած լինէր խորհրդային Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանագծի նկատմամբ գործերը հայեցային յետ քաշելու, սահմանագծի երկայնքով միջազգային դիտորդներ տեղակայելու, սահմանների սահմանազտում եւ սահմանագծում սկսելու մեր առաջարկը: Այդ առաջարկը չընդունող Ատրպէյճանը հանդիսանում է յարձակողական պետութիւն եւ պէտք է աներկբայօրէն հանի իր գործերը ՀՀ ինքնիշխան տարածքից: Սեփական կամքը Հայաստանին պարտադրելու յոյսերը սին են:

«ՀՀ կառավարութիւնը եւ ժողովուրդը վճռական են եւ մենք բոլոր հնարաւոր միջոցներով պաշտպանելու ենք մեր ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը, պետականութիւնը եւ անկախութիւնը:

«Միաժամանակ մենք շարունակում ենք ընդգծել ստեղծուած իրավիճակի խաղաղ հանգուցալուծման անհրժեշտութիւնը եւ նախկինում մեր արած բոլոր առաջարկութիւններն ուժի մէջ են: Մենք հաւատարիմ ենք Նոյեմբերի 9-ի եւ Յունուարի 11-ի եռակողմ յայտարարութիւնների դրոյթներին:

«Վերադառնալով սահմանային իրադրութեանը ասեմ, որ այս պահին սահմանին յարաբերականորէն հանգիստ է, բայց ընդհանուր իրավիճակը շարունակում է մնալ ծայրայեղ լարուած: Մենք շարունակաբար եւ ճշգրտուած տեղեկութիւններ կը հաղորդենք ՀՀ քաղաքացիներին»:

Միջազգային 6 Ցուցարար Սպանուած Սուտանի Մէջ

Սուտանի մէջ տեղի ունեցած զինուորական պետական հարուածէն վերջ, ժողովրդային համատարած ցոյցեր տեղի կ'ունենան երկրի գլխաւոր քաղաքներուն մէջ: Միապետական նոր վարչակարգի եւ նորանոր սեղմումներու օրէնքներու դէմ բողոքի ելած ցուցարարներու դէմ կը գործածուին բիրտ ուժեր եւ հրագէնի կենդանի կրակոցներ: Միայն անցեալ շաբաթուան ցոյցերու ընթացքին սպանուեցաւ 6 հոգի, գլխաւորաբար խարթում եւ Ումտուրման քաղաքներուն մէջ: Սուտանցի բժիշկներու եւ ՄԱԿ-ի տրւեալներուն համաձայն՝ Հոկտեմբեր 25-էն ի վեր, ապահովութեան ուժերու կողմէ ցարդ սպանուած է 19 ցուցարար:

Արիւնալի Զինեալ Բախումներ Էքուատորի Բանտերուն Մէջ

Շրջանէ մ վեր էքուատորի բանտերուն մէջ տեղի կ'ունենան կատաղի կռիւներ բանտարկեալներու միջեւ, առ հասարակ հրոսակախումբերու եւ թմրանիւթերու աւազակներու միջեւ, որոնք ունին նաեւ միջազգային կապեր: Կուսաքիլ ծովափնեայ քաղաքի բանտը որ կը պարբապէ 30 հազար բանտարկեալ ներկայիս ունի 40 հազար կալանաւոր, որոնց 15 հազարը տակաւին չեն դատապարտուած:

Բովանդակ երկրի բանտերու մէջ զինեալ բախումներու պատճառով մահացած է 300 մանտարկեալ: Միայն անցեալ Սեպտեմբերի ամսուան ընթացքին Լիթորալի բանտին մէջ մահացած է 119 կալանաւոր: Տեղական իշխանութիւններուն համաձայն Հարաւային Ամերիկայի մէջ տեղի ունեցած վատթարագոյն միջադէպը կը համարուի այս մէկը:

Ծայրայեղ Լարուած Վիճակ Պելաուսիոյ Եւ Լեհաստանի Միջեւ

Պելաուսիոյ ներկայ վարչակարգին դէմ Եւրոպայի Միութեան կողմէ կիրարկուած պատժամիջոցներու պատճառով, ներկայիս սահմանային խիստ լարուած մթնոլորտ մը կը տիրէ Պելաուսիոյ եւ Լեհաստանի միջեւ: Արդարեւ, տասնեակ հազարաւոր գաղթականներ հասած են սահմանամերձ շրջաններ եւ կը փորձեն փախուստ տալ դէպի Լեհաստան, որ Եւրոմիութեան անդամ է:

Ներկայիս գաղթականները՝ վրաններ լարած են Լեհաստանի սահմանի մօտ եւ լեհ զինուորներու արգելքին կը բախին: Անոնք ի վիճակի չեն նաեւ ետ Պելաուսիա վերադառնալու:

Օգոստոս ամիսէն ի վեր, հազարաւոր կիներ, տղամարդիկ եւ երեխաներ, ընհանրապէս Իրաքէն, Սուրիայէն եւ Եմէն կայք հաստատած են Լեհաստանի սահմանին մօտ: Անոնք Մինսք (Պելաուսիոյ մայրաքաղաք)՝ եկած են թրքական օդանաւային ընկերութեան պատկանող սաւառնակներով: Ճիշդ այս պատճառով այլ թուրքիան կ'ապականուի գաղթականներուն ճամբայ հարթելու մեղանդրանքով: Այս շրջանին թուրքիա որոշած է նուազագոյնի իջեցնել դէպի Մինսք կատարուող օդանաւային թռիչքները:

Նշենք նաեւ որ Եւրոպայի պատասխանատուներ կը դատապարտեն Պելաուսիան եւ դեկավար Ալեքսանդր Լիւկաշէնքօն, իբրեւ թէ սխալ տեղեկութիւններ տուած է գաղթականներու դէպի Եւրոպա անցքը դիւրացնելու հարցով:

Պատերազմը Զէ Աւարտած Տակաւին

Շարունակուած էջ 1-էն

ստանձնած պարտաւորութիւնները: «Բազմաթիւ անգամ ընդհանրապէս խօսուել է, որ Հայաստանի Հանրապետութեան պետական սահմանը հանդիսանում է կարմիր գիծ Ռուսաստանի Դաշնութեան համար, եւ Մայիսի 12-ից սկսած ատրպէյճանցիները խախտել են այդ կարմիր գիծը: Այս առումով մենք մեր դաշնակցին դիմում ենք, որպէսզի մենք կարողանանք մեր դաշնակցային պարտաւորութիւնների շրջանակներում վերականգնել Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը», յայտարարեց ԶԶ Անվտանգութեան հորիզոնային քարտուղար՝ Արմէն Գրիգորեան:

Ինչպէս նախորդ ներթափանցումներէն ետք, այս անգամ եւս Մոսկուա կը շարունակէ վարել լուռ քաղաքականութիւն՝ շեշտը դնելով իր միջնորդութեան վրայ: Սակայն, Հայաստանի ղեկավարութիւնը եւ ժողովուրդը կ'ակնկալեն

յստակ ու գործնական քայլեր, որոնք սակայն կ'ուշանան վերջին տարիներուն Ռուսաստանի կողմէ թուրքիոյ նկատմամբ վարած քաղաքականութեան պատճառաւ:

Այս բոլորի լոյսին տակ կարելի է անվարան ըսել, որ 44-օրեայ պատերազմը չէ աւարտած տակաւին, պարզապէս փոխուած է պատերազմի ձեւն ու եղանակը, երբ Ատրպէյճան կը փորձէ «մաշեցնել» հայկական կողմին ու այդպիսով հասնիլ իր նպատակներուն: Այս իրավիճակը կրնայ շարունակուիլ տակաւին երկար ժամանակ մինչեւ որ, արտաքին միջամտութիւններ պարտադրեն Ալիեւին՝ հեռու մնալու Հայաստանի ինքնիշխան տարածքներուն նկատմամբ ոտնձգութիւններէն: Այլապէս, պետք է սպասել որ Հայկական բանակը վերագինուի, վերահաստատուի ու բարձրացնէ իր դիմադրողական կարողութիւնները ու իր միջոցներով կասեցնէ թշնամիին:

«ՄԱՍԻՍ»

Հարցազրույց Քոչարեանը Սփիւռք Ասելով, Պատկերացնում է Արա Աբրահամեանին, Անդրանիկ Միհրանեանին Կամ Մարգարիտա Սիմոնեանին, Այդ Կարգի Մարդկանց

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ,
Հարցազրուցավար

Մեր գրուցակիցն է տնտեսագետ Բազրատ Առաքելեանը (Պրահա)

Պարոն Առաքելեան, Ռոբերտ Քոչարեանը «Հայաստան» դաշինքի հրահրած հանրահավաքին յայտարարել է, թե համագաղթին դիմադրութեան շարժում են սկսում ՀՀ-ում, Արցախում, Սփիւռքում: Սփիւռքում ինչպէ՞ս են արձագանքում այս կոչերին:

Ճիշտն ասած, չեմ մտածում, որ Եւրոպայում, ԱՄՆ-ում, Վրաստանում կամ Ռուսաստանում բնակուող հայութեան ներկայացուցիչները կարող են մասսայական ուշադրութիւն դարձնել նրա հնչեցրած բառերին: Կարծում եմ, որ նա, ասելով Սփիւռք, իր աչքերի առաջ պատկերացնում է Արա Աբրահամեանին, Անդրանիկ Միհրանեանին կամ Մարգարիտա Սիմոնեանին, այդ կարգի մարդկանց, որոնք իրենց հայ են կոչում եւ աշխատում են իրենց իբրեւ հայեր դրսևորել, բայց իրականում որեւէ առնչութիւն չունեն այն իրականութեան հետ, որը Հայաստանում տեղի է ունենում եւ ոչ էլ երբեւիցէ նպատակ են ունեցել իրենց ազգին ռեալ օգնութիւն մատուցել: Ընդհանրապէս, Ռոբերտ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը, ինչպէս նաեւ իրենց համակիրները միշտ ապրել են, ապրում են եւ, կարծում եմ, դեռ երկար կարող են ապրել իրենց կառուցած աշխարհի մէջ եւ պատկերացնել, որ դա է իրականութիւնը, այնինչ դա մտովի կառույց է, որը որեւէ աղերս չունի իրականութեան հետ:

Այսինքն՝ անհիմն կոչե՞ր են Սփիւռքից աջակցութիւն ստանալու: Ժողովրդագրագետները ներկայացնում են թուեր, որ ամենամեծ արտագաղթը հենց նրա օրօք է եղել:

Եթէ խօսքը իրական սփիւռքահայութեան մասին է, որն աշխարհով մէկ բնակուում է, ներառեալ Ռուսաստանը, ապա, ինքը, բնականաբար, որեւէ աջակցութիւն չի ստանալու ոչ մէկից: Ուրիշ հարց է, որ նա կարող է ստեղծել նման պատկեր՝ ունենալով ձեռքի տակ այն բաւականին լուրջ ռեսուրսները, որոնք կարող է գործածի եւ ստեղծի այդ պատրանքը, թէ Սփիւռքը իրենց այդ հարցերում աջակցում է: Եւ, կարծում եմ, որ նրանք այդ սցենարով էլ կը փորձեն շարժուել:

Քոչարեանը հանրահավաքին նաեւ յայտարարել է, որ կամ բարիկաղներով, կամ ընտրութիւններով սրանց վճռելու են. Սա երկար չի տեւելու, շաբաթների, ամիսների հարց է լինելու: Հնարաւոր համարո՞ւմ էք:

Ինչպէս կարելի է լուրջ վերաբերուել նման յայտարարութիւններին, նա կոչեր է անում Հայաստանի, Արցախի, Սփիւռքի կողմից, բայց իրականում Ազատութեան հրապարակում ինքը առաւելագոյնը 4000 հոգի է հաւաքում, էլ չասենք, որ կէսից աւելին նախկինների ձեռնարկութիւններում աշխատող մարդիկ են, որոնց պարտադրում են մասնակցել այդ հանրահավաքներին եւ յետոյ էլ երեւի հիւրասիրում պիցցայով:

Առհասարակ, Հայաստանում լուրջ ուժ կարելի է համարել միայն այն կազմակերպութեանը կամ այն առաջնորդներին, որոնք կը կարողանան 40000-անոց հանրահավաք կազմակերպել, եւ միայն դրանից յետոյ կարելի է խօսել մասսայականութեան մասին:

Ինչ վերաբերում է արժէ թէ ոչ ներգրաւել Սփիւռքին Հայաստանեան ներքաղաքական կեանքին, պէտք է ասեմ, որ այսպէս թէ այնպէս Սփիւռքն արդէն ներգրաւուած է Հայաստանի ներքաղաքական կեանքին, յատկապէս այսօր, եւ ասեմ աւելին, ապրում է այդ կեանքով: Բոլորս ակնատես եղանք Սփիւռքի այն մեկնած ձեռքին կամ օգնութեանը, որը պատերազմի օրերին սկսեց գալ Հայաստան: Ցաւօք սրտի, այսօր Հայաստանի ղեկավարութեան կողմից որեւէ կերպ չի օգտագործուում այն հսկայական ինտելեկտուալ ռեսուրսը, որն այսօր ունի Սփիւռքը եւ կարող է ներդնել Հայաստանի զարգացման մէջ: Բայց, չնայած դրան, Սփիւռքը միշտ կայ եւ կը լինի Հայաստանի կողքին, ինչը բազմիցս ապացուցուել է:

Պարոն Առաքելեան, Դուք այս օրերին Հայաստանում էիք: Ընդ-



հանրապէս, Հայաստանում կա՞յ նրա շուրջ մոբիլիզացիա: Որքանո՞վ նա կարող է յաջողել:

Գիտէք, որոշակի մոբիլիզացիա իր շուրջ, բնականաբար, գոյութիւն ունի, այն մարդկանցից եւ այն ուժերից, որոնք նախկինում օգտուում էին այն կերակրատաշտից, որն ինքն էր ստեղծել ժամանակին, այլապէս քոչարեանական ուժերը պարզապէս չէին մտնի Աժ: Այն ժամանակ նրանք ֆինանսական եւ մեղիա ռեսուրսները օգտա-

գործեցին եւ հասան նպատակին, հիմա կարող են օգտագործել նաեւ ուժային ռեսուրսները: Չէ՞ որ Վլադիմիր Վլադիմիրովիչ Փութինի գործերն այսօր գտնուում են Հայաստանում եւ իւրաքանչիւր պահի մի ֆէյք յեղաշրջում կարող են գործել:

Ինչ վերաբերում է ժողովրդին, ապա նա մերժուած է մեր ժողովրդի կողմից եւ ընդմիշտ, եւ կարծում եմ, որ ինքը դա շատ լաւ հասկանում է:

ՇՆՄԱՆՆԵՐ

Նախաձեռնութեամբ՝

Մաւիւա

ԾԱՌԱՔԱՅԵՐԹ

Տօքթ. Արշակ Գազանձեան

ՄԵՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

Ազգային Մտորումներ ու Կեցուածքներ


Գիրքը կը ներկայացնէ՝

Իրաւաբան Ռուբէն Աւշարեան

ՏՕՔԹ-ՄՐՇԿ ԳՈՂՈՎՆՅԱՆ

ՄԵՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՈՒ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ



«Տօքթ. Արշակ Գազանձեան այն հազուագիտ աշխարհային-հասարակական գործիչներէն է որ տասնամեակներու վրայ երկարող իր քաղաքական եւ գաղափարական աշխատանքները միշտ բնորոշուած են հասասարակչուած կեցուածքներով եւ լուրջ ու չափաւոր արտայայտութիւններով:»

Հինգշաբթի, Նոյեմբեր 18, 2021

Երեկոյեան ժամը 7:30-ին

ՀԿԲՄ Կեդրոն

1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104

Տարելիցը Մեր Պարտուժեան



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴՎԻԹԵԱՆ

Նոյեմբերեան այս օրերուն, մեր ազգային խորտակուած սրտերը կ'ալեկոծին: Ու մեր մտքի պատանուներուն վրայ նուիրեալներուն պատկերները կը գծուին: Անոնց, որոնք քանի մը տասնամեակ առաջ արցախեան հայրենի հող ազատագրեցին ու մեզի տուին արժանապատուութիւն վերագտած ըլլալու հաճոյքն ու բերկրանքը: Եւ անոնց, որոնք անցեալ տարի այդ ազատագրուած հողի պաշտպանութեան համար իրենց կեանքը զոհեցին՝ մեզի տալով իրենց կորուստը սգալու ցաւն ու դառնութիւնը:

Նոյեմբերեան այս օրերուն, նոր Ապրիլ 24-ի յուշամատեան կայ ամէն հայու հոգիին մէջ: Յուշամատեան՝ մեր երեսնամեայ անհոգ անցեալի անհաւատալի եւ անբացատրելի թուլութեան ու փութկոտութեան դերակատարները արձանագրելու: Յուշամատեան՝ գայրոյթի, խոկումի եւ «Յաղթելու ենք» լոզունգին հատարացող ու անոր սիրոյն նահատակուած մատղաշ սերունդի մը հերոսապատումը յաւերժացնելու:

Վերջերս իմացանք, թէ արտախորհրդարանական կուսակցութիւններու եւ կողմերու մասնակցութեամբ Փաշինեանի իշխանութիւնը մտադիր է յանձնախումբ մը կազմելու, որպէսզի քննուին եւ ուսումնասիրուին վերջին պատերազմի պարտութեան ծալքերն ու պատճառները: Յուսանք, որ անկողմնակալ առաջադրութեամբ կը յայտնաբերուին մեր պարտութեան պատճառ դարձող բոլոր տուեալները եւ ճշմարտութեան դատաստանի առջեւ կը խայտառակուին ու կը պատժուին այդ տուեալներուն տուն տուող կողմերն ու մարդիկը, ըլլան անոնք փաշինեանական կամ ոչ-փաշինեանական:

Եւ, դժբախտաբար, այդ «մարդիկը», կամ այդ մարդոցմէ ոմանք, քիչ մը հոս ու հոն աղմուկ բարձրացնելով եւ իրենց «հացին իւր քսելու» քարոզչութեամբ հաւաքներ կը կազմակերպեն՝ առիթը չփախցնելու հոգեբանութեամբ, ու պարապ-սարապ լոզունգներով «Հայաստանի թրջացում, Արցախի հայաթափում, իշխանաւորների գանձագողութիւն» վանկարկելով՝ հանրահաւաքի կը կանչեն եւ նոյնիսկ եկեղեցւոյ շրջաբերականներու մէջ հաւատացեալները ընկերներ կոչելով՝ այդ ցոյցին ու հաւաքին առցանց հետեւիլ կը թելադրեն...:

Չկայ հայ մը աշխարհի վրայ, որ լեցուն է ցաւով, կսկիծով ու գայրոյթով տարելիցի մը առթիւ, որ խլեց մեզմէ մեր ազգային

արժանապատուութիւնը: Սակայն ամօթ է եւ անընդունելի, որ այդ ցաւն ու գայրոյթը դառնան շահագործումի առարկայ՝ սեփական «գրամագլուխ» դիզելու կամ համազգային մեր վերականգնումի երթին գնացքը խարխափելու:

Հեռատեսիլի կայանէ մը դիտեցինք հանրահաւաքը ու լսեցինք խօսակցութիւններուն, որոնք ամբողջովաբար թիւն կատարեցին եւ որեւէ փրկարար ծրարքի չներկայացուցին: Անոնք չըսին մեր վիրաւոր ժողովուրդին, թէ այս ճակատագրական օրերուն ի՞նչ ունին տալիք մեր հայրենիքին, որպէսզի «Հայաստանը չթրջանայ եւ Արցախը չհայաթափուի»...:

Խօսեցան «արժանապատիւ խաղաղութեան» մասին եւ թէ «պէտք է ազատագրել մեր հայրենիքը այս թրջահայտակ իշխանութիւնից», եւ հանրահաւաքը եզրափակեցին՝ կոչ ուղղելով «համազգային դիմադրութեան՝ Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում»:

Ամերիկայի նախկին նախագահ Տանըլտ Թրամփի ստաբանութիւններուն ոգիով եւ տրամաբանութեամբ շարժող «Հայաստան» դաշինքը, թրամփի տիրահազակ Յունուար 6-ի ժողովրդային պողոթկում յառաջանելու օրինակով,

«համազգային դիմադրութիւն» հրահրելով՝ մոռցած ըլլալ կը թուի, թէ հակառակ պատերազմի պարտութեան եւ անկէ ետք մեր ժողովուրդին մեծամասնութեան քուէներով իշխանութեան վերատիրացաւ ներկայ իշխանութիւնը: Յետոյ, արդեօք հայելիի մէջ ինքզինքնին տեսնել գիտե՞ն բոլոր անոնք, որոնք կը մեղադրեն ներկայ իշխանութիւնը գանձագողութեամբ ու եթէ ստաբանութիւն չէ իրենց ըսածը, Աստուած օգնէ մեր ժողովուրդին եւ հայրենիքին:

Հանրահաւաքին ունեցած իր ելոյթին մէջ, «դաշինք»-ի առաջնորդ Քոչարեանը մեղադրեց իշխանութիւնը դիւանագիտական անգիտութեամբ, երբ ըսաւ, թէ որեւէ երկիր չդատարարեց Ազրպէյճանի յարձակումը: Հոս կ'արժէ մէջբերել իմաստուն բանաստեղծի մը խօսքը, որ կ'ըսէ.

«Կեանքի մանրուքից վեր ելէք, անվերջ Հորիզոնները, հեռուները լայն Բարձրից նայողին միայն կ'երեւան»:

Ու բարձրից նայողը կը տեսնէ ու պէտք է տեսնէ, թէ մեր պարտութիւնը արդիւնք էր մեր ուժերէն շատ աւելի զօրաւոր ուժերու եւ կողմերու ուղղակի

կամ անուղղակի դաւադիր մասնակցութեան, որոնք «հողային ամողջականութեան» միջազգային օրէնքի տարբերակը առաջ քշեցին՝ ետին ձգելով «փոքրամասնութեանց ինքնորոշումի» իրաւական տար-Ջերակը:

Այն ինչ որ ներելի էր փութիւնեան հօր Ռուսիոյ՝ Աբխազիան, Հարաւային Օսեթիան եւ Խրիմը մասնատելու վրաստանէն եւ Ուքրանիայէն, ներելի չէր անգոր Հայաստանին՝ Արցախը մասնատելու Ազրպէյճանէն: Առաւել, էրտողանի բռնատիրութեամբ հմայուած Ամերիկայի նախագահ Տանըլտ Թրամփը, իր հետ նաեւ տակից-տակ գործող Անգլիան եւ Արեւմուտքի շփացած տղան՝ Իսրայէլը, բոլորն ալ թուրքիոյ առջեւ շողացուցին իրենց կանաչ լոյսերը. Այս հսկաներուն կրաւորական եւ նոյնիսկ դրական դիրքը շահագործող թուրքիոյ եւ Ազրպէյճանի դէմ ի՞նչ կրնար ընել Հայաստան, Փաշինեաններով կամ ոչ-Փաշինեաններով:

Նախկին նախագահ Քոչարեան իր ելոյթին մէջ նշեց նաեւ, թէ երկու կողմերու միջեւ եղող բանակցութեանց ընթացքին երկուստեք պէտք է գիշիլ, եւ եզրակացուց ըսելով, թէ մենք այս պարտութեանէն ետք գիշելու բան չունինք: Ի՞նչ կը նշանակէ այսպիսի իրավիճակ մը, եթէ ոչ անձնատուութիւն (capitulation): Փաշինեանով կամ Քոչարեանով կամ ուրիշ որեւէ մէկով. Յուսանք, որ Ռուսիա ԱՅՍ ԱՆԳԱՄ նժարին մէջ կը դնէ իր ծանրութիւնը եւ մեզի ի նպաստ կը դիրքորոշուի իր փրկարարի դերով:

Blood Drive
Gaidz Youth Organization
 1060 N Allen Ave
 Pasadena, CA 91104

Sunday, November 28, 2021
11:00 a.m. to 5:00 p.m.

To schedule an appointment go to RedCrossBlood.org and enter sponsor code: AEBU

Streamline your donation experience and save up to 15 minutes by visiting RedCrossBlood.org/RapidPass to complete your pre-donation reading and health history questions on the day of your appointment.

Give Something that Means Something®
 1-800-RED CROSS | RedCrossBlood.org | Download the Blood Donor App

American Red Cross

«Ձուարթնոց» Մշակութային Մարմինի Տասնամեակի Տօնակատարումին Հայերենի Ուսուցիչը Ի Պատուի



Տասը տարիներ առաջ, 2011 թվականին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ՝ Տէր Յովնան Արքեպիսկոպոսի հովանաւորութեամբ ծնունդ առած «Մշակութային մարմինը» հետագային կոչուեցաւ «Ձուարթնոց», եւ «որուն գլխաւոր առաքելութիւնը եղաւ, բազմատեսակ ծրագիրներով սատարել հայոց լեզուի, գրականութեան, մշակոյթի եւ տոհմիկ ավանդութեան պահպանման, ինչպէս նաեւ ամրապնդել այն հաւատքը, թէ հայրենիքն է անխախտ կոտանն ու փարոսը սփիւռքահայութեան», յայտագիր-գրքոյկին մէջ կը նշէ «Ձուարթնոց»-ի ատենապետ՝ Տոքթ. Սիմոն Սիմոնեան:

Տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 7 Նոյեմբեր 2021-ի երեկոյեան, Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու «Կիրակոս» սրահին մէջ:

Ներկայ էին մեծ թիւով հայերէնի նախկին թէ ներկայիս գործող ուսուցիչներ, որոնք յատկապէս հրախրուած էին կազմակերպիչ մարմինին կողմէ որպէս օրուան



Տոքթ. Սիմոն Սիմոնեան

մեծարեալներ: Արդարեւ, գեղեցիկ եւ օրինակելի քայլ մը, որուն արժանի են բոլոր հայ դասատուներն ու տնօրէնները, բայց յատկապէս հայոց լեզուի, գրականութեան, պատմութեան, կրօնքի, երաժշտութեան ուսուցիչ-ուսուցչուհիները:

Որպէս գլխաւոր բանախօս հրաւիրուած էր Ֆրեզնոյի համալսարանի Հայագիտական բաժնի պատասխանատու Փրոֆ. Պարլո Տէր Մկրտիչեանը: Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ կը պատուէին Լոս Անձելըսի մօտ ՀՀ գլխաւոր հիւպատոս, դեսպան Դոկտ. Արմէն Բայբուրդեանն ու ազնիւ տիկինը:

Մշակութային մարմինի ատենապետ Տոքթ. Սիմոն Սիմոնեան

բացման խօսքին մէջ կարեւորեց մշակոյթի, յատկապէս հայ մշակոյթին դերը հազարամեայ հայրենիքէն ներս թէ դուրս՝ արտասահմանի մէջ: Հայրենի պետականութեան կորուստին դիմաց, Տոքթ. Սիմոնեան շեշտեց. «Հայ ժողովուրդին շուրջ ամէն բան փուլ եկաւ, բայց կանգուն մնաց կարեւորագոյնը՝ Հայ մշակոյթը եւ զայն խորհրդանշող հարուստ, հոյակերտ ու պատկառելի լեզուն Մերոպատա: ...Ուրեմն ի՞նչ է Մշակոյթը. այն հզօրագոյն ուժը, որ կարողացած է մեզ պահել դարերու աննկարագրելի վտանգներէն», մատնանշեց ան:



Փրոֆ. Պարլո Տէր Մկրտիչեան

Օրուան գլխաւոր բանախօսն էր Ֆրեզնոյի համալսարանի Հայագիտական ուսման կեդրոնի տնօրէն Փրոֆ. Պարլո Տէր Մկրտիչեան: Յարգելի բանախօսը հայերէն եւ անգլերէն լեզուներով կարեւորեց մշակոյթին դերը հայ կեանքին մէջ, այբուբենն ու Մերոպ Մաշտոցը սեպելով «գէնք եւ վահան»: Փրոֆեսորը անդրադարձաւ հայերէնի հնդեւրոպական լեզուաճիւղին, նշեց, թէ հայկական մշակոյթը ունի ստեղծագործ ոգի մը: Ան ըսաւ, թէ հպարտ ենք մեր մշակոյթով եւ առաջարկեց, որ լեզուն նոր ձեւերով մօտեցնենք նոր սերունդին եւ շարունակենք ստեղծագործել: «Թող հայ մշակոյթը հազար տարի ե՛ւս ապրի» հռետորական ոճով եզրափակեց ան:

Սրտի խօսքով հանդէս եկաւ վսեմաշուք հիւպատոս Դոկտ. Արմէն Բայբուրդեան: Ան բարձրօրէն գնահատեց «Ձուարթնոց» մշակութային մարմինին ստեղծման ջանքն ու ճիւղը: Ողջունեց ներկայութիւնը հիւր փրոֆեսորին եւ արժեւորեց Ֆրեզնոյի համալսարանի հայագիտական կեդրոնի աշխատանքները: Ան շեշտեց, թէ «քրիստոնէութիւնը հայկականացուել է մեր մշակոյթի միջոցով», աւելցնելով, թէ մշակոյթը պահելը քիչ է, այն պէտք է զարգացնել: Հայրենիքը

նկատելով կարեւորագոյն ազբուր մեր մշակոյթի, Դոկտ. Բայբուրդեան կարեւորեց Հայաստանեայց եկեղեցու թեմերուն դերը, որոնք մշտապէս սատար կը կանգնին մեր մշակոյթին: Հայրենի դիւանագէտը, իր խօսքի աւարտին, անդրադարձաւ «մշակութային դիւանա-



Դոկտ. Արմէն Բայբուրդեան

գիտութեան» հօր ազդակին: Գեղարուեստական յայտագիրը ճոխ էր եւ բազմաժանր: Աշակերտուհիներ Լորիկ Արթինեան (Sound of Children) եւ էլէն Վարդանեան (Blair High School) հան-



Հայր Տաճատ Եարտըմեան

Մօտ չորս տասնամեակներու գիտական լայն եւ խոր հետազոտութիւններով, յայտնաբերած նիւթերով եւ վիճարկումներով, ըսաւ նախագահը, Տատոյեան ստեղծած է հայ վիճակին եւ պատմական եղափոխութեան պատմական մեծ եւ բարդ հիւսուածք մը՝ ուղղակիօրէն աւրնչուած իսլամական քաղաքակրթութեանց: Տատոյեանի հայագիտական գործունէութիւնը կը վերբերէ եւ կը շեշտէ անհրաժեշտութիւնը վերատեսականացնելու (reconceptualize) հայագիտական եւ Մերձավոր/Միջին Արեւելեան պատմագրութիւնները՝ քաղաքական, մշակութային եւ փիլիսոփայական նոր տեսանկիւններէ:

Տատոյեան շեշտեց կարեւորութիւնը ձեռնարկելու ամբողջական եւ քննական վերասերտողութեան մը բոլոր՝ 'հայ բաներուն' արդիական, քննադատական եւ միջմարգային գործիքներով (contemporary critical and interdisciplinary tools), հեռու էութեան պաշտութեանէ (essentialism) եւ հայկեղրոնացումէ (Armenocentrism): Այս ծրագիրն է, աւելցուց անիկա, որ ստիպեց գինք անցնելու փիլիսոփայութեան մարզին պատմագրութեան, միշտ սակայն պահելով փիլիսոփայութեան քննական մեթոտը:

Նախագահ Տէր Մաթոսեանի խօսքին ետք Տատոյեան անդրադարձաւ իր վերջին աշխատութեան իր մտաւորական ասպարէզին ծիրէն ներս: Բաժնելով ՀՈՒԸին հետ այս մեծարժէք պատուանշանը իր վաստակին եւ գործին ի գնահատանք՝ անիկա ըսաւ թէ որքան որ իր ցարդ նուաճած տարածութիւնը կարեւոր էր, աւելի կարեւոր էին իր կտրելի՛ք հեռավորութիւնները: Ծատ մը կողմերով գոյապաշտական (existential) դրդիչ ոյժը (motive) իր մօտ եղած է Նիցչէական «Կա՛մ ուրեմն կը մտածեմ» (Sum ergo cogito, I exist therefore I think) հրամայականը: Ասիկա Տէր Մաթոսեանի «Կը մտածեմ ուրեմն կամ՛ին» (Cogito ergo sum)

Առաջին «կայծը», բացատրեց անիկա, ուսանողական տարիներուն կատարած մէկ գիւտն էր Յովհաննէս Երզնկացիի իսլամական աղբիւրներուն ինքնութեան մասին: Յետագայ հետազոտութիւններէ ետք արդէն համոզուած էր թէ կա՛ն «հայ-իսլամական բաներ» որոնք կը կազմեն ուրոյն մարդ մը հայագիտութեան եւ Մերձավոր/Միջին Արեւելեան գիտութեանց մէջ: «Այդ մարզին միջադարձն եւ անկոխ աշխարհին մէջն է որ ձեռնարկեցի առանձին ճամբորդութեան մը», ըսաւ Տատոյեան, «առանց քարտէսի, սակայն վստահ թէ անոնք անպայմանօրէն պիտի պատճառէին Կոպեռնիկեան յեղաշրջում մը այն տարազներուն եւ

«TIME» Ամսագիրը Հայկական Ռոպին Ռոպոթը ճանչցաւ Տարուան Լաւագոյն Նորարարութիւնը



Արհեստական բանականութեան վրայ հիմնուած առաջին հայկական Ռոպին Ռոպոթը ճանչցուեցաւ հեղինակաւոր «TIME» ամսագրի 2021 թուականի լաւագոյն նորարարութիւնը:

Հանրայայտ «TIME» ամսագրին հերթական թողարկումը նուիրուած է 2021 թուականի լաւագոյն 100 նորարարութիւններուն, որոնց շարքին իր ուրոյն տեղը գտաւ հայկական Ռոպին Ռոպոթը: TIME ամսագիրը Ռոպին Ռոպոթին նուիրուած իր անդրադարձին մէջ գայն բնորոշած է որպէս «հոգատար ընկեր»:

«TIME»-ը կ'անդրադառնայ հայկական դարձանատուներէն մէկուն մէկ պատմութեան, երբ թոքաբորբով հիւանդ 8-ամեայ երեխան երկու օր շարունակ կը հրաժարէր ուտելէ եւ այդ ժամանակ բժշկական անձնակազմը Ռոպինը կը հրաւիրէ աղջկան սենակը: Մտաւորապէս 20 րոպէ անոնք խաղեր կը խաղան, կը քննարկեն սիրելի կենդանիները, որմէ ետք Ռոպինը կը հեռանայ՝ խոստանալով վերադառնալ միայն մէկ պայմանով՝ եթէ փոքրիկը հաց ուտէ, ինչէն ետք, փոքրիկը կը զարմացնէ բոլորը, եւ Ռոպինը անկասկած կը վերադառնայ:

«TIME»-ը կը մէջբերէ նաեւ Ռոպինը հիմնադիրին՝ Կարէն Խաչիկեանի միտքը այն մասին, որ անձակագմին նպատակն էր տեղծել ոչ թէ հերթական արհեստագիտական սարք մը, այլ վստահելի եւ հասակակից ընկեր մը երեխաներուն համար: Յօդուածին մէջ կը նշուի, որ Ռոպին Ռոպոթը կ'օգտագործուի աշխարհի 12 բժշկական հաստատութիւններէ ներս, եւ յառաջիկայ 12 ամիսներուն ընթացքին պիտի տեղադրուի 100 ամերիկեան հիւանդանոցներու մէջ եւս:

«Ասիկա աննախադէպ յաջողութիւն մըն է ոչ միայն մեր անձնակազմին, այլ՝ ամբողջ Հայաստանի համար: TIME ամսագրի

լաւագոյն 100 նորարարութիւններու շարքին յայտնուելը իսկապէս մեծ յաղթանակ մըն է մեր երկրին եւ ամբողջ գիտական ներուժին համար: Պարտաւորեցնող է եւ միաժամանակ չափազանց հաճելի», - նշեց Ռոպին Ռոպոթը ստեղծած հայկական «Expper Technologies» ընկերութեան համահիմնադիր Կարէն Խաչիկեանը:

Յօդուածը կ'անդրադառնայ նաեւ Ռոպինը առաքելութեան՝ օգնել հիւանդանոցային բուժում ստացող երեխաներուն յաղթահարելու լարուածութիւնը եւ աւելի թեթեւ դարձնելու բուժման ընթացքը: Ռոպինը ապաքինման փուլին գտնուող երեխաներուն կ'օգնէ գոնաւորելու հիւանդանոցային միջավայրը: Իր իւրաքանչեւ մօտեցման շնորհիւ՝ Ռոպինը կրնայ նուազեցնել երեխաներուն լարուածութիւնը, բարելաւել անոնց փորձառութիւնը հիւանդանոցին մէջ, ինչպէս նաեւ դիւրացնել բժշկական անձնակազմին յետագայ աշխատանքը: Բացի անկէ, տարատեսակ բժշկական միջամտութիւններու ատեն Ռոպինը կրնայ շեղել երեխաներուն ուշադրութիւնը եւ նուազեցնել ցաւի ընկալումը: Ռոպինը հասցուցած է հիւրընկալուելու նաեւ տուն-գիշերօթիկներէ ներս՝ ամբողջութեամբ փոխելով տեղի բնակիչներուն առօրեան:

Ի դէպ, վերջերս աշխարհահռչակ «Forbes» ամսագիրը նոյնպէս անդրադարձած է Ռոպին Ռոպոթին: Վերջերս, Ռոպինը հանրայայտ «Fast Company»-ի կողմէ արժանացած է լաւագոյն արտադրութեան ձեւագրում մրցանակին: Ռոպինը հասցուցած է արտասահմանի մէջ եւս մեծ հետաքրքրութիւն յառաջացնել եւ արդէն իսկ կը կիրառուի Միացեալ Նահանգներու բազմաթիւ յառաջատար հիւանդանոցներու եւ բժշկական հաստատութիւններու մէջ:

Սուրբ Ծննդեան Բարեգործական Տօնավաճառ՝ «Օրորա»ի Եւ ՄԱԿ-ի Հայաստանեան Գրասենեակին Համատեղ Նախաձեռնութեամբ



Ձմեռնային տօներուն ընդառաջ, «Օրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը եւ ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակը նախաձեռնած են Սուրբծննդեան տօնավաճառ՝ համատեղ ջանքերով օգնելու կարիքի մէջ յայտնուած մարդոց:

Տօնավաճառին մասնակցութիւնը լաւ առիթ է գնահատելու բարի գործն ու առաջ մղելու բարութեան բարութեամբ պատասխանելու սովորութիւնը՝ աջակցելով «Օրորա»ի եւ Հայաստանի մէջ ՄԱԿ-ի ծրագրերուն:

Ստացուած ամբողջ հասույթ պիտի ուղղուի աշխարհի տարբեր անկիւններու մէջ դժուարին պայմաններու մէջ յայտնուած մարդոց կեանքը բարեփոխելու ծրագրերուն, որոնք կը տառապին հակամարտութիւններու, մարդկութեան դէմ իրագործուող յանցագործութիւններու կամ մարդու իրաւունքներու այլ լուրջ խախտումներու հետեւ անքով:

«Ձմեռնային տօները ուրախութեան եւ մեր ընկերներուն ու ընտանիքին հետ նշելու հրաշալի առիթ են, բայց ես կը կարծեմ, որ սա նաեւ հիանալի հնարաւորութիւն է՝ օգնութեան ձեռք մեկնելու անոնց, որոնք այդքան բարեբախտութիւն չեն ունեցած: Ինչպէս գիտէք, «Օրորա»ի հիմքին երախտագիտութեան համամարդկային գաղափարն է, որուն կրնան միանալ իւրաքանչիւրը: Գործով արտայայտելով երախտագիտութիւնը՝ «Օրորա»ն ցոյց կու տայ, թէ ինչպէս կարելի է ոչ միայն վերապրիլ, այլեւ բարգաւաճիլ եւ բարութեան պատասխանել բարութեամբ՝ օգնութեան ձեռք մեկնելով այլոց: Մասնակցելով մեր Սուրբծննդեան բարեգործական տօնավաճառին՝ իւրաքանչիւրը հնարաւորութիւն կը ստանայ վարուելու ճիշդ այդպէս՝ միեւնոյն ժամանակ անցընելով հրաշալի ժամա նակ», ըսած է «Օրորա» մարդասիրական նախաձեռնութեան գործադիր տնօրէն Նիքոլայ Սթանիշը:

Սուրբծննդեան տօնավաճառը տեղի պիտի ունենայ 12 Դեկտեմբեր 2021-ին՝ Կիրակի ժամը 10:00-20:00, «Դուին» համերգասրահին մէջ (Պարոնեան 40, Երեւան, Հայաստան): Ուրախ մթնոլորտն ու ապրանքներու լայն տեսակա նին՝ գիրքեր, խաղալիքներ, յուշանուէրներ, բացիկներ, ձեռագործ աշխատանքներ, զարդեր եւ այլն, ինչպէս նաեւ տօնական ուտեստներն ու ըմպելիքները, Սուրբծննդեան տօնավաճառը ժամանցի իւրաքանչեւ վայր պիտի դարձնեն ամբողջ ընտանիքին համար: Մուտքը ազատ է բոլորին համար: Միջոցառումը պիտի կայացուի՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները, ներառեալ՝ դիմակներու կրումն ու ընկերային հեռաւորութեան պահպանումը:

«Ձմեռնային տօնավաճառները ջերմ աւանդույթ են շատ երկիրներու եւ մշակութիւններու մէջ, անոնք նաեւ հրաշալի տարբերակ են՝ ամէնէն կարիքաւորներուն օգնելու համար միջոցներու հայթայթման տեսանկիւնէն: Մենք ուրախ ենք «Օրորա» մարդասիրական նախաձեռնութեան հետ այս միջոցառումը կազմակերպելու հնարաւորութեան համար, քանի որ դեռ այնքան շատ համայնքներ կան աշխարհի եւ Հայաստանի մէջ, որոնք խիստ կարիքի մէջ են: Մեր հաւաքական պատասխանատուութիւնն է շարունակել հոգ տանիլ եւ աջակցիլ այնքան ժամանակ, քանի դեռ կայ անոր կարիքը, եւ օգնել կառուցելու ճանապարհը դէպի կայուն զարգացման նպատակներու իրագործում բոլորին համար: Ես յոյս ունիմ, որ այս միասնական նախաձեռնութիւնը պիտի դառնայ նաեւ աւանդույթ, եւ միասին պիտի կարենանք օգնել աւելի շատ մարդոց», ըսած է Հայաստանի մէջ ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմպի Շարփը:

www.massisweekly.com
Daily News Updates

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

«Հայ Ապրիմ»



ՂՈՎՏ. ՂՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Մատլեն Գարաջակոբեանը ծնած է Թուրքիա: 1980 թվականին եկած է ժընեւ, Զուլիջերիա: Երբ հարցուցի իրեն, թէ ինչո՞ւ ձգեց Թուրքիան, ան պատասխանեց. «Աւելի լաւ կեանք մը ունենալու համար»:

Սփիւռքահայ իրականութեան մէջ յաճախ կը հանդիպիմ եւ կը լսեմ այս արտայայտութիւնները: Հայը կ'ուզէ աւելի լաւ կեանք: Թէեւ ան իր ծննդավայրը կը լքէ քաղաքական, ընկերային, տնտեսական ու ապահովական պատճառներով, բայց նոյնքան նաեւ՝ անձնական ու ընտանեկան: Աւելի լաւ կեանքի իտե՛յալը մարդուն, բայց նաեւ հայուն փնտռածն է ամէնուրեք:

Հոկտեմբեր 2021: Այս անգամ Զուլիջերիա այցելութեանս մէջ կար այլ նորութիւն մը՝ հայկական իմաստով: Ժընեւի Լոզան փողոցի երկայնքին, բանուկ ու խճողուած շրջանի մը մէջ, երկաթուղիի կայարանէն ոչ շատ հեռու եւ կեդրոնական մասին մէջ բացուած է հայկական գրախանութ-կեդրոն մը՝ 10 սեպտեմբեր 2021-ին: Անունը՝ «Հայաստան՝ մշակոյթ եւ բոյր» (Armenie Culture et Saveurs): Եւ իրաւացի է, որովհետեւ Հայաստանը մշակոյթ է, որ բոյր է եւ կը բուրէ նախ ինքն իրեն, իր շրջապատին, ապա նաեւ համաշխարհային քաղաքակրթութեան համար:

Մատլեն Գարաջակոբեանն ու Մարիա Մկոյեանը երկու նուիրեալ հայուհիներ են, որոնք ստանձնած են այս գրախանութ-կեդրոնը բանեցնելու ծառայութիւնը: Ծառայութիւնը, որովհետեւ, ինչպէս Մատլենը ըսաւ, «այս մեր տունն է»: Հայուն տունը, զոր անոնք կ'ուզեն ներկայացնել նաեւ տեղացի ու օտար հասարակութեան:

Գրախանութ-կեդրոնին մէջ կան գիրքեր՝ հայուն մշակոյթին եւ պատմութեան մասին, բայց նաեւ՝ հայկական երաժշտութեան խոսասանիւններ, յուշանուէրներ, հայկական քոնեք, գինի ու ուտելիք: Հայկական տուն մը, ուր հայուն ամբողջական մշակոյթը կը ներկայացուի: «Կ'ուզենք, որ հայերը այս կեդրոնը իրենց տունը համարեն, իսկ ոչ հայերն ալ ճանչնան մեր ինքնութիւնը», ըսաւ Մատլեն:

Մարիա Մկոյեան կու գայ Հայաստանէն: Երաժշտութիւն ուսանած է Երեւանի մէջ եւ ատեն մը Ֆրանսայի Լիոն քաղաքի օփերային մէջ երգած է, ունի երկու զաւակ: «Ամէն հայ ինքն իր ընտա-

նիքին մէջ պէտք է ազգային ինքնութիւնը պահէ», կը հաւատայ ան: «Ես Ֆրանսայի մէջ այդ փորձեցի ընել»: Այս նոյն գիտակցութեամբ Մարիա կ'ուզէ իր ժամանակը տալ հայ մշակոյթին, զոր պահած է իր ընտանիքի մէջ՝ զայն նաեւ հանրութեան ծանօթացնելու՝ այս կեդրոնին միջոցով: Կը գրուցէի հայուհիի մը հետ, որ հայ մշակոյթը դարձուցած է իր կեանքին հիմքը: Մասնագիտացած մշակոյթի մէկ զեղեցիկ «երանգներէն»՝ երաժշտութեան մէջ, արդէն իսկ ան իր գիտութիւնն ու տաղանդը կը բաժնեկցի հասարակութեան հետ:

Զուլիջերիոյ մէջ կը գործէ «Յակոբ Թոփալեան հիմնադրամ»-ը: Յակոբ Թոփալեան ծնած է Անգլիա, 1897-ին: Ծնողքը եկած են Արեւմտահայաստանէն: Տեղափոխուած է նախ Եգիպտոս, ապա Իտալիա: 1960-ական տարիներուն անոր նուիրատուութեամբ կառուցուած է ժընեւի Հայ առաքելական եկեղեցին, որ կոչուած է Սուրբ Յակոբ: Ան 1985-ին հիմնած է «Թոփալեան» հիմնադրամը, որուն գլխաւոր նպատակն է հայ մշակոյթը, լեզուն եւ գրականութիւնը վառ պահել: Անոր կեանքին կարգախօսը եղած է՝ «Հայ ապրիմ»: Յակոբ ոչ մէկ ճիգ խնայած է, որպէսզի իր կեանքի հաւատամքը դառնայ ապրող իրականութիւն: Իսկ ապրող իրականութիւնը՝ հայը, որ ապրեցաւ, կ'ապրի ու պիտի շարունակէ ապրիլ իր մշակոյթով: Պատմութեան փորձառութիւնը ա՛յս ցոյց տուած է, ուստի այդ ալ պէտք է պահպանուի:

Այս գրախանութ-կեդրոնը հիմնուած է «Թոփալեան» հիմնադրամին միջոցով:

1995-ին հիմնադրամը նաեւ հիմնած է միօրեայ դպրոց, որպէսզի հայ երեխաներուն եւ պատանիներուն հայերէն սորվեցնէ՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն: Այս դպրոցը մինչեւ այսօր տակաւին կը շարունակէ իր առաքելութիւնը: Աւելին. հիմնադրամը աւելի քան քսան տարիներէ ի վեր հայկական տաղաւարով մը կը մասնակցի ժընեւի միջազգային ցուցահանդէսին, ուր հանրութեան կը ներկայացուին հայ ժողովուրդի պատմութիւնն ու մշակոյթը՝ ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով: Հայկական կեդրոնին մէջ հիմնուած էր նաեւ փոքր կրպակ մը, ուր գիրքեր եւ երաժշտական խոսասանիւններ կը տրամադրուէին հայուն թիւին: Բայց միշտ ալ եղած էր երազը, որ պէտք չէ բաւարարուիլ այս փոքր կրպակի սահմաններով:

Հետապնդած եւ իրականացուցած է այդ երազը, այդ փոքր կրպակը այսօր տեղափոխուած է ժընեւի այս բանուկ փողոցի այժմու կեդրոնը՝ հայ մշակոյթը աւելի լայնածաւալ ձեւով ծանօթացնելու օտարներուն: Փոքր կրպակով սկսած տեսիլքը այսօր դարձած է գրախանութ-կեդրոնի իրականութիւն, որուն հիմքը կը մնայ նոյնը՝ «Հայ ապրիմ»:

- Գիտե՞ս՝ վահէ անունը ի՞նչ կը նշանակէ: Վահէ կապրաշը ատենապետն է «Թոփալեան» հիմնադրամին: Ան կարեւոր աշխատանք տարած է կազմակերպելու համար այս գրախանութ-կեդրոնը:

- Վահէ անունը ինձի համար շատ ջերմ է,- ըսի Վահէին,- հօրս անունն էր, իսկ այժմ՝ տղուս: Ամէնէն լաւ կը նշանակէ,- եղաւ իմ արագ պատասխանս Վահէին:

Վահէն ուրախ էր, բայց ան իր անուան նման՝ ամէնէն լաւ կ'ուզէ տալ իր հայ ժողովուրդին: Պէջըրութ ծնած վահէն, որուն ծնողքը եկած են Թուրքիայէն, փոքր տարիքէն Զուլիջերիա տեղափոխուած է: Վահէն ոչ մէկ ճիգ կը խնայէ հայուն տալու ամէնէն լաւը: Եւ այս կեդրոնը լաւ օրինակ մըն է այդ ամէնէն լաւին:

Լոզան փողոցը միջազգային մշակոյթներու հանդիպման վայր է: Ժընեւ ընդհանրապէս միջազգային քաղաք է, ուր կը գտնուին Միացեալ ազգերու կազմակերպութիւնը, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը եւ այլն: Այս միջազգային քաղաքին մէջ եւս հայը ներկայութիւն է՝ իր մշակոյ-

օտարին:

Մարիա Մկոյեանն է դարձեալ: Ան բաժնեց իր ցաւը: Ցաւը՝ Արցախին: «Միայն ցաւ կայ սրտիս մէջ», ըսաւ ան: Մարիա նոր վերադարձած է Հայաստանէն: «Երբեք այսօր այցելեցի, որպէսզի տեսնեմ սրտիս մէջ ի ցաւը,- ըսաւ Մարիա: - Դժուար է հաւատալ՝ ի՞նչ եղաւ»:

Մարիա մէկ-մէկ սկսաւ քակել իր ներաշխարհի այդ ցաւը: «Մենք ազգ ենք, որ կ'ուզենք կատարելի մագիք: Բայց պէտք է նաեւ ընդունինք, որ մենք ալ սահմանափակումներ ունինք», ըսաւ Մարիա: Պիտի ընդունինք, որ մենք ալ սխալներ կ'ընենք: Փոքր ազգ ենք եւ նոյնքան կրնանք սխալիլ»:

Հայկական գրախանութ-կեդրոնը ունի իր ապագայի ծրագիրները: Կը մտածեն կազմակերպել փոքր տարողութեամբ լսարաններ, նկարչական ցուցահանդէսներ ու, տակաւին, հայոց լեզուի դասաւանդում՝ մեծահասակներու համար: «Այս կեդրոնին մէջ կրնանք մինչեւ երեսուն հոգի տեղաւորել», ըսաւ Մարիա:

Ու դարձեալ՝ Արցախի իրավիճակը: Քառասուն եւ չորս օրերու պատերազմը ցնցած է հայութիւնը քիչ մը ամէն տեղ: Մեծ է հարուածը: Պարտութիւն, նահատակ երիտասարդներ, կորսուած հողատարածք... Այս իրավիճակը խոր եւ ծանր հոգեբանական ազդեցութիւն ձգած է իւրաքանչիւր հայու վրայ: Եւ այս զգացումը կը տեսնեմ այսօր քիչ մը ամէն տեղ, ուր կը հանդիպիմ հայերու:



թով եւ իր ամէնէն լաւով...

- Պէտք է մենք ալ ծանօթացնենք մեր մշակոյթը բոլորին,- ըսաւ Վահէ:

Մետա Խաչատրեան Զուլիջերիա եկած է Թեհրանէն, 1980-ին: Կարեւոր աշխատանք կը տանի հիմնադրամի տարբեր ծրագիրներու իրականացման մէջ, բայց նաեւ՝ այս գրախանութի կազմակերպչական աշխատանքներուն:

Մետա կու գայ ազգային գօրաւոր ինքնութեամբ եւ ինքնագիտակցութեամբ միջավայրէ: Պարսկաստանի հայկական իրականութեան մէջ մեծցած եւ դաստիարակուած է, կը տեսնէ Արեւմուտքի մէջ հայ մնալու մարտահրաւերները: «Շատ դժուար է Արեւմուտքի մէջ ազգային ինքնութիւնը պահել: Մեծ ջանք պէտք է թափել», ըսաւ Մետա:

Ան ջանք չի խնայեր հայուն, նաեւ օտարին ծանօթացնելու մեր մշակոյթը: «Մենք մշակոյթ, լեզու եւ գրականութիւն ունինք՝ որպէս ժողովուրդ, եւ այդ բոլորով պէտք է հպարտ զգանք»: Մետային համար հայուն հպարտութիւնը կը սկսի սերմանելով զայն նոյնինքն հայուն մէջ, ապա՝ փոխանցելով

«Շատ ցաւալի է այն, որ պատահեցաւ մեզի Արցախի պատերազմին», ըսաւ Մետա: Բայց ան յուսահատ չէ, ինչպէս իւրաքանչիւր հայ: «Ամէն ջանք պէտք է թափել, որպէսզի Հայաստանին օգնենք եւ մեր Արցախի ինքնութիւնը վերականգնենք», ըսաւ Մետա: Բայց այդ յաջողցնելու համար Մետա կը տեսնէ մէկ ճամբայ. «Միանականութիւնն է: Միասին կրնանք յառաջանալ: Ճշգրիտ եւ նպատակասլաց աշխատանք պէտք է տանինք»:

Փոքր կրպակէն՝ մինչեւ հայկական գրախանութ-կեդրոն: Ուրախ էի եւ նոյնքան հպարտ, որ կրցայ այցելել այս իրականացուած կեդրոնը եւ հանդիպիլ ու ժամանակ անցընել հայորդիներու հետ: Հայորդիներ, որոնք հպարտ են իրենց ինքնութեամբ ու մշակոյթով, եւ որոնք ոչ մէկ ջանք կ'ուզեն խնայել պահելու եւ ծանօթացնելու համար զայն: Ծանօթացնել հայուն մշակութային արժէքը: Եթէ մէկ կողմէ հայուն, բայց նաեւ՝ օտարին:

Ժընեւի մէջ նաեւ տեսայ հայը, որ աւելի լաւ կեանք մը կ'ուզէ

Տիգրան Ա. Երուանդունի Թագաւոր

«Երուանդակերտ դաստակերտի այգիների բազմութիւնը նմանուել էր խիտ արտեւանունքի գեղեցիկ գծին, որի հիւսիսային Կողմի կամարած եւ դիրքը իսկապէս համեմատուում էր գեղեցիկ կոյսերի հոնքերին»

Մովսէս Խորենացի

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակուածն նախորդ թիւէն)

Հայկազուն Տիգրան արքայ: Այդ անունը հանդիպել է իրանական քաղաքակրթութիւնում, որը աւելի ուշ հանդիպել նաեւ Արտաշէսեան թագաւորական տան գահակալութեան ատեն: Տիգրան անունը իրանական ցեղերի հնդեւրոպականների լեզուից փոխառութիւն է: Տիգրան անունը առաջին անգամ յիշատակուել է աքեմենեանների տոհմին պատկանող Քսերքսէսի բանակի առաջնորդ՝ Տիգրան անունից: 391 թուականին ուրիշ մի Տիգրան էլ յիշատակուում է որպէս պարսիկ թագաւորի զօրավարի անուն: Աւելի ուշ, Տիգրան անունը Արմինա-Հայաստանում տարածուում է եւ գեղեցկահունչ ու փառահունչ անուն համարուելով, դառնում ազգային անուն: Իսկ ո՞ր Արմինա-Հայ մարդը չի հպարտանում իր ցեղի ամենահայրենապաշտ, բոլոր ժամանակների արեւելքի ամենագորարքայ, պատերազմի յանդուգն կախարհ, հայկազուն արքաների-արքայ Տիգրանին:

Պատմահայր Մովսէս Խորենացին իր ցեղին սրտի ահազանցած սիրով պատմում այդ Տիգրանի ու նրա քաջ գործերի մասին: Տիգրանին բնութագրում է որպէս «Մեր թագաւորներից ամենագորը, ամենախոհեմը եւ նրանցից ամենաքաջը, հայրենի երկրի սահմանները ընդարձակել մինչեւ նախկին բնակութեան վայրերը»: Տիգրանի

նակի համեմատ դիւցազունների էին նմանում: Հետեւակ կռուողները ձիաւոր դարձան, պարսերով կռուողներն յաջող աղեղնաւորներ, կոպալներով կռուողները գինեցին սրերով ու տեգաւոր նիզակներով. մերկերը պատսպարուեցին վահաններով եւ երկաթէ զգեստներով: Եւ երբ մի տեղ հաւաքուէին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու գէնքերի փայլմունքը բաւական էին թշնամիներին հալածելու եւ վանելու: Նա խաղաղութիւն եւ շէնութիւն բերեց, բոլորին լիացրեց իւղով եւ մեղրով»:

«Այս եւ այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտեաչ եւ մագերի ծայրը գանգուր Երուանդեան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայուածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ եւ թիկնաւէտ, կերակուրների եւ ընպելիքների մէջ պարկեշտ, ուրախութիւնների մէջ օրինաւոր, որի մասին մեր հները, որոնք փանդիւններով երգում էին, ասում էին, թէ մարմնի ցանկութիւնների մէջ էլ չափաւոր է եղել, մեծիմաստ եւ պերճախօս եւ լի բոլոր (յատկութիւններով), որ պիտանի են մարդուն: Եւ այս գրքում ի՞նչ կայ ինձ աւելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմութիւնը երկարել: Նա ամեն բանի մէջ արդարադատ եւ հաւասարասէր կշէնք ունենալով՝ ամէն մէկի կեանքը կշռում էր իր մտքի լծակով. Չէր



ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ



Երուանդունիներու Մեծ Հայքն ու Տօփքը

աջակցութեամբ Կիւրոսը տապալել է Մարաց իշխանութիւնը, յոյներին հնազանդեցրել: Ընթերցողին տպաւորելու համար՝ բառացի մէջբերում եմ Խորենացու խօսքը Տիգրանի մասին. «Եւ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքի եւ խոհականութեան, չի զվարճանայ սրա յիշատակութեամբ եւ չի ձգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց եւ ցոյց տալով քաջութիւն՝ մեր ազգը բարձրացրեց, եւ մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ եւ հարկապահանջներ: Մթերքներ ոսկու եւ արծաթի, եւ պատուական քարերի եւ զգեստների եւ զանազան գոյների եւ գործունած քների՝ տղամարդկանց եւ կանանց համար, առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երեւում, իսկ գեղեցիկներն այն ժամա-

նախանձում լաւագոյններին, չէր արհամարհում նուաստներին, այլ աշխատում էր ընդհանրապէս ամենքի վրայ տարածել իր խնամքի զգեստը»:

«Սա սկզբում դաշնակից լինելով Աժդահակին, որ մարացի էր, նրան կին է տալիս իր Տիգրանուհի քոյրը, որին թախանձանքով խնդրում էր Աժդահակը: Որովհետեւ (Աժդահակը) մտածում էր՝ այսպիսի ազգականութեան շնորհիւ կամ հաստատուն սէր պահպանել Տիգրանի հետ, կամ այս կերպով հեշտութեամբ դաւաճանօրէն սպանել: Որովհետեւ նրա միտքը կասկածի մէջ էր, երբ մի անսպասելի մարգարէութիւն նրան ցոյց տուեց առաջիկայում նրան պատահելիքը:»

«Թախանձել էր Աժդահակի հոգին, խուզել միտքը՝ Տիգրանի ու Կիւրոսի մտերմական ու նրանց միջեւ հաստատուած դաշնակցա-

յին յարաբերութիւններից: Խնդրել էր պալատական խորհրդականներից բացառապէս ինչպէս քանդել կապերը Պարսիկի ու զանաբախրաւոր հայերի միջեւ: Ժամանակի հոլովոյթի հետ Աժդահակը վտանգ է տեսնում Տիգրանի ու Կիւրոսի միաբանութեան հետեւանքներից: Իրեն ու Մարաստանին պատահելիք հաւանական վտանգը խիստ մտահոգել է իրեն: Գիշերային քնում նրան տեսիլք է երեւացել: Խորենացին խիստ պերճախօս ոճով ու լեզուով նկարագրել է Աժդահակի երազը: Աժդահակին թուացել է, որ օտար երկրում էր, նրա բարձր լեռան գագաթը սառնամանիքով ծածկած: Նրան ասել էին, որ այն Հայկազանց երկիրն է: Երկար նայելով այդ լեռան, նրան երեւացել է գագաթին երկնային քօղով ծիրանագգեստ կին՝ խոշոր աչքերով, բարձրահասակ, կարմիր այտերով՝ ծննդի երկունքով բռնուած: Հիացմունքով դիտել այդ երեւոյթը, երբ այդ կինը երեք գաւակ է ծնել, որոնք իրենց հասակներով ու բնութեամբ դիւցազուններ էին: Նրանցից առաջինը՝ առիւծ հեծած սլանում դէպի արեւմուտք, երկրորդը՝ յովազ հեծած դէպի հիւսիս դիմել, իսկ երրորդը՝ վիշապ սանձած արշաւել Մարաստանի վրայ»:

«Աժդահակը, խորհրդականներից իմաստուն ու խրատատու շատ առաջարկներ է լսել: Միջամտելով նրանց խօսքը, աւելացրել, որ աստուածների օգնութեամբ օգտակար միջոց է մտածել: Թշնամու մտալոգացումները իմանալու համար ոչինչ աւելի օգտակար է քան սիրոյ միջոցով նրան դաւելը: Տիգրանին դաւելու համար մտադրուել է անուշ խօսքերի խոստումներով նրա գեղեցկագոյն քոյր Տիգրանուհուն կնութեան առնելու փափաք յայտնել: Խորհել, որ խնամիական ազգականութեամբ հնարա-

ւոր է թաքուն դաւեր լարել, նրանց մտերմիւններին զանձեր ու պատիւներ խոստանալով հակառակորդին սպաննել՝ սրով ու թոյնով, կամ նրա շրջապատին ու կուսակալներին զանձեր բաշխել, եւ արդէն որպէս անգոր մարդ՝ տիրել նրան: Բարեկամները ու խորհրդականները ճշմարիտ էին համարել նրա մտածած հնարքները»:

«Աժդահակը, իր խորհրդականների մէկի միջոցով՝ մի թղթի հետ, զանձեր ուղարկել Տիգրանին, հետեւեալ բովանդակութեամբ. «Քո սիրելի եղբայրութիւնը դիտէ, որ այս աշխարհի կեանքում աստուածները մեզ չեն պարգեւել աւելի օգտակար բան, քան սիրելիների բազմութիւն, իհարկէ իմաստուններին եւ հզօրագոյններին, որովհետեւ այդ դէպքում դրսից խուզուելութիւններ չեն համարձակուում ծագել, եւ եթէ պատահում իսկոյն կ'ընկնուեն, իսկ ներսում նրանք կը հալածուեն, քանի որ այդպիսի չարութիւնը այլեւս ոչ ոքից չի կարող մուտք գործել: Արդ՝ ես տեսնելով բարեկամութիւնից առաջ եկող այս օգուտը, կամեցայ աւելի հաստատուն դարձնել ու խորացնել մեր մէջ եղած սէրը, որպէսզի երկուքս էլ բոլոր կողմերից ապահովութիւն գտնելով՝ ամբողջ եւ հաստատ պահենք մեր տէրութիւնները: Եւ այս բանը կը կատարուի, եթէ ինձ կնութեան տաս քո քոյր Տիգրանուհուն, հայոց մեծ օրիորդին. թերեւս նրա համար նաեւ բարի համարես, որ թագուհիների թագուհին լինի: Ողջ եղիր, մեր թագակից ու սիրելի եղբայր»:

Աժդահակի պատգամաւորը գալիս է Տուշպա, Տիգրան համաձայնում է քրոջը՝ Տիգրանուհուն, կնութեան տալ Աժդահակին, առանց

Գոհարանութեան Օրը

Շարունակուած էջ 15-էն

մասին, թէ Գոհարանութեան Օրը-ը մեր երախտագիտութիւնը առ Աստուած արտայայտելու պատեհ առիթ մըն է: Մարդիկ իրենց կերուխումին մէջ կորսնցուցած են այդ օրուան խորհուրդն ու իմաստը: Պանդուխտ Հայրեր իրենց Գոհարանութեան տօնախմբումով կ'ուզէին իրենց երախտագիտութիւնը յայտնել Աստուծոյ՝ Անոր ընծայած տեսանելի եւ անտեսանելի բարիքներուն, պարգեւներուն եւ շնորհներուն համար: Անոնց նպատակը հնդկահաւ ուտել, ոգելից ըմպելիներով արբենալ եւ գուարճանալ չէր: Կերուխումը միայն միջոց մըն էր գերագոյն նպատակին, այսինքն գոհունակութիւն եւ շնորհակալութիւն մատուցանելու «ամէն բարի տուրք եւ ամէն կատարեալ պարգեւ շնորհող Աստուծոյն»:

Երկրորդ Գոհարանութեան Օրը-ը յիշեցում մըն է մեզի, որ երախտագիտութիւնը հայեացքի հարց է եւ կախեալ չէ արտաքին պարագաներէ: Անհատի մը երախտագիտութիւնը չի չափուիր իր վայելած բարիքներու թիւով: Երախտագիտութիւնն ու գոհունակութիւնը քանակական իրակախութեանց հետ աղերս ունեցող բաներ չեն: Երբ յետադարձ ակնարկ մը նետենք Ամերիկայի առաջին Գոհարանութեան Օրուան վրայ՝ այն եզրակացութեան կը հանգինք, որ երախտագիտութիւնն ու գոհարանութիւնը աւելի հոգեկան ներքին տրամագրութիւններ են քան արտաքին պարագաներէ կախեալ երեւոյթներ:

Վաղեմի օրերուն Նիւ Ինկլընտի մէջ սովորութիւն դարձած է Գոհարանութեան Օրը ճաշակեղանի իւրաքանչիւր պնակին մէջ հինգ եգիպտացորենի հատիկներ դնել՝ որպէս յիշեցում այն ցուրտ ու սաստիկ առաջին ձմեռուան դառն օրերուն երբ Ամերիկա ժամանած Պանդուխտ Հայրերու օրապարէնը (ration) միայն հինգ եգիպտացորենի հատիկներ էին...: Ահաւոր ձմեռ մըն էր, որ անցուցին այդ խեղճ պանդուխտները օտար ասիւրի վրայ ոչ միայն ֆիզիքական գրկանքներու ենթակուցեցան, այլ նաեւ մարդկային մեծ կորուստներ ունեցան: Ահա այս տեսակ պայմաններու մէջ այդ Պանդուխտ Հայրերը իրենց երախտագիտութիւնը կը յայտնէին Աստուծոյ:

Երրորդ, Գոհարանութիւնը թէեւ ներքին գոհունակ ապրումէ մը կը ծնի, բայց առանց արտայայտութեան կը դառնայ անիմաստ եւ ընդունայն: Առօրեայ ընդհանրացած ասացուածք մը կայ հետեւեալ խօսքերով-«եթէ չգործածես՝ կը կորսնցնես»: Չարտա-

յայտուած երախտագիտութիւն մը շուտով կը չքանայ ու կը մեռնի, մինչ արտայայտուած շնորհակալութիւնը օրհնաբեր կը դառնայ թէ՛ զայն մատուցանողին եւ թէ՛ զայն ընդունողին համար: Միւս կողմէ, արտայայտուած երախտագիտութիւնը ոչ միայն հոգեպէս կը վսեմացնէ ենթական, այլ զայն տուողն ու ստացողը կը ստեղծեն հոգեկցութիւն մը, երկուստեք ներքուստ հոգեկան կապ մը:

Հարց կը ծագի, թէ ինչպէ՞ս կարելի է յայտնել երախտագիտութիւն: Դարեր առաջ, վաղեմի երախտագիտ Սաղմոսերգուն այս մասին մտածած ատեն, կը հարցնէ, «Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը՝ Անոր ինծի ըրած բոլոր բարութեանը փոխարէն» (Սաղմոս 116.12): Սաղմոսերգուն այն եզրակացութեան կը հանգի որպէս պատասխան իր իսկ հարցումին թէ ինք իր երախտագիտութիւնը պիտի յայտնէր խօսքով, գործով եւ տալով:

Առաջին, իր երախտագիտութիւնը պիտի արտայայտէր խօսքով. «պիտի փառաբանեմ Տիրոջը անունը» (Սաղմոս 116.13):

Երկրորդ, իր երախտագիտութիւնը պիտի արտայայտէր գործով, «Տիրոջը պիտի ծառայեմ» (Սաղմոս 116.16):

Երրորդ, իր երախտագիտութիւնը պիտի արտայայտէր տալով. «Իմ ուխտերս Տիրոջը պիտի հատուցանեմ» (Սաղմոս 116.18):

Սաղմոսերգուն փորձառութեամբ այն եզրակացութեան հանգած էր, թէ գոհարանութեան երեք ազդու արտայայտութիւններն են խօսք, գործ, եւ նուիրում (տալ):

Ինչպէս անցեալին, ներկայիս ալ երախտագիտութեան այս երեք արտայայտութիւնները նոյնչափ ազդու են: Ի՞նչ մեծ օրհնութիւն է երկուստեք «շնորհակալ եմբ բառերը թէ՛ արտասանողին եւ թէ՛ լսողին համար: Բայց որքա՞ն մարդիկ ժլատ են այս գոյգ երախտագիտական բառերը իրենց շրթներով արտասանել:

Երախտագիտութիւն արտայայտելու գործնական եւ ազդեցիկ այլ կերպերէն մէկն ալ բաժնել է մեր շուրջիներուն հետ այն բոլոր բարիքները, պարգեւներն ու շնորհները որ մեր երկնաւոր Հայրը տուած է մեզի, ըլլան անոնք նիւթական, շօշափելի պարգեւներ կամ մտաւոր ու հոգեւոր շնորհներ:

Թող յառաջիկայ Գոհարանութեան Օրը մարմնական հաճոյքներէ, ընտանեկան համախմբումներէ, կերուխումէ եւ ընկերային վայելքներէ աւելի բան մը դառնայ ամենուն համար: Թող այդ օրուան խորհուրդը ոչ միայն Գոհարանութեան Օրուայ, այլ նաեւ մեր ամէնօրեայ կենցաղին յարացոյց դառնայ:

«Զուարթնոց» Մշակութային Մարմինի

Շարունակուած էջ 8-էն

Իրենց լուծման բերած էին Դոկտ. Մարալ Տէպաղեան-Անճառկոյեան եւ Տէր եւ Տիկին Վարդգէս եւ Ռամբլա Սերոբեաններ:

Կը շնորհակարտեք Արեւմտեան թեմի «Զուարթնոց» մշակութա-

յին մարմինի բոլոր անդամները գլխաւորութեամբ անոր գրասէր ու մշակութասէր ատենապետին՝ Տոբթ. Սիմոն Սիմոնեանին: Անտարակոյս, բայց մը լրացնելու միտող ձեր տասնամեայ աշխատանքը տուած է իր պտուղը: Բարի երթ դէպի երկրորդ տասնամեակ:

www.massispost.com
Daily News Updates

Փոք. Սեդա Պարսունեան Տատոյեան

Շարունակուած էջ 14-էն

պատկերներուն» որոնց մէջ զարգացած է հայ պատմագրութիւնը եւ «հայ բաներու» մեր հասկացողութիւնը:

Գործնականապէս՝ իւրաքանչիւր աշխատութիւն առաջնորդած է յաջորդին: Իր վերջին գործը՝ Իսլամը Հայ Գրական Մշակոյթին մէջ... (Islam in Armenian Intellectual Culture...), կառուցուած է երեք հիմնական վիճարկումներու կամ թեզերու վրայ. «Հայ Մահմետը», «Հայ-Իսլամ ինտելեկտուալ Դաշինքը» (Pax Islamica) եւ «Հայ Ղուրանները»: Ասոնք կը կազմեն տեսական եռոտանի մը, որուն շուրջ կառուցուած եւ դատաւորուած են մեծ թիւով սկզբնական եւ ամէն կարգի աղբիւրներ եւ վիճարկումներ: Առաջին անգամ ըլլալով Տատոյեան հաւաքած եւ թարգմանած է իսլամի վերաբերեալ բոլոր հայ թեքսթերը, ծանօթ եւ երբեմն ամբողջովին անծանօթ, եթեւեւրորդ դարէն մինչեւ ներկայ:

Իր եզրակացութեան մէջ Տատոյեան ըսաւ թէ իր գործը ցարդ

հաստատում մը, «խօսք» (statement) ուժովը այն թեզերուն եւ նիւթերուն՝ զորս կը ներկայացնէ առաջին անգամ ըլլալով: «Գործս մուտք մը, ներածական (prolegomenon) մըն է», ըսաւ անիկա, «նոր մարզի մը, Հայ-Իսլամական Ուսմանց, որ միաժամանակ մաս կը կազմէ հայագիտութեան եւ շրջանի գիտութեանց: Անիկա պէտք է ըլլայ գործիք համապարփակ եւ արմատական ծրագրի մը հասկնալու հայոց պատմական փորձառութիւնը մեծ շրջանին մէջ իր բոլոր կողմերով եւ արաբական աղբիւրներու ուղղակի գործածութեամբ: Զարգանալու եւ մեծնալու՝ ունենալու համար ընդհանրական կարեւորութիւն եւ տեղ, հայագիտութիւնը պէտք է որ լքէ նեղ աւագանները, ինչպէս Միջերկրականի աւագանը, կտրէ աւանդական պատմագրութեան պատուարները, ինչպէս Հերքուլիսի ժայռերը, եւ նաւարկէ դէպի Ատլանտեանը՝ կամ Մերձաւոր/Միջին Արեւելեան գիտութեանց ովկիանոսը, իր բնական միջավայրը:

«Հայ Ապրինք»

Շարունակուած էջ 16-էն

ապրիլ: Աւելի լաւ՝ եթէ իրեն եւ ընտանիքին, նոյնքան նաեւ՝ հայուն հաւաքական կեանքին համար: Եթէ Յակոբ Թոփալեանը հաւատաց, որ պէտք է «Հայ ապրինք», ան դիմեց գործնական քայլի եւ այս կարգախօսը իրականացնելու համար հիմնեց հիմնադրամ, քանի ուզեց տեսնել, թէ հայը պիտի շարունակէ ապրիլ աւելի լաւ կեանք մը:

Հայը ցեղասպանութենէ ետք չընկրկեցաւ եւ չյուսահատեցաւ: Հայը հաւատաց «Հայ ապրելու» տեսլականին եւ ամէն ջանքի գործ դրաւ իրականացնելու համար զայն: Արցախի այս «ցաւոտ» պատերազմէն ետք ալ հայը նոյնպէս պիտի հաւատայ ու կառչի աւելի լաւ կեանքի տեսլականին: Պատմութեան փորձը ցոյց տուած է, որ

իւրաքանչիւր ձախողութենէ ետք հայը կրցած է դարձեալ ոտքի կանգնիլ: Մեր պատմութեան այս փուլին ալ նոյնը պէտք է պատահի...

Փոքր կրպակէն՝ գրախանութկեղոն: Ժընեւի հայորդիները կը հաւատան հայուն աւելի լաւ կեանքի տեսլականին: Տեսլականը, որ հայը պիտի ապրի ու դարձեալ ապրի: Եւ այս տեսլականին արդիւնքը՝ «Հայաստան, մշակոյթ եւ բոյր»:

Եւ այս մշակոյթի եւ անոր բոյրին մէջէն՝ աւելի լաւ կեանք, ուր հայը կ'ապրի ու պիտի ապրի հայօրէն:

Յակոբ Թոփալեանի իտէյալն է այս, բայց նաեւ Ժընեւի հայերուն ու իւրաքանչիւր հայուն՝ ամէնուրեք...

Հայ ապրինք...

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ,
ՈՐՊԵՏՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ

RESIDENT INSURANCE PRODUCER
Accident and Health Agent,
Casualty Broker-Agent, Life-Only
Agent, Property Broker-Agent



209 E. Alameda Ave., Suite 204
Burbank, CA 91502

**We Insure Your Future,
SO YOU CAN FOCUS ON THE PRESENT**



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479
demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

ՄԱՅԱԶԴ



ՀԵՐԻ ՀԱՄԲԱՐ ՏԻՐԱՄԵՐԵԱՆ
(1941-2021)

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր, մեծ հօր եւ հարազատին՝ **ՀԵՐԻ ՀԱՄԲԱՐ ՏԻՐԱՄԵՐԵԱՆ**ի մահը որ պատահեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 11, 2021ին: Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի Նոյեմբեր 18, 2021 ժամը 12:30ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Street, Pasadena CA:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Արշօ Տիրամերեան եւ զաւակները Սեւակ եւ Լարա Մանուկեան
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Թարըք եւ Սանտրա Պուրճի եւ զաւակները Մայք, Ալիսա եւ Անճելինա
- Եղբայրը՝ Օննիկ Տիրամերեան եւ դուստրը՝ Փեկի Տիրամերեան Տէր եւ Տիկ. Ճէք եւ Լարա Տիրամերեան եւ զաւակները Քոյրը՝ Նագեղի Բարիքեան
- Տէր եւ Տիկ. Կէրի եւ ձենի Բարիքեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Յամիկ Բարիքեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Քրիսթին Բարիքեան եւ զաւակները Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Կարպիս եւ Թագուհի Տիրամերեան Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արտա Տիրամերեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Տարվին եւ Հուրիկ Պաղտասարեան եւ զաւակները Եղբօրը աջրին՝ Անի Լեւոնեան Տիրամերեան
- Քոյրը՝ Անահիտ Սալիպեան Տէր եւ Տիկ. Տանիէլ եւ Լենա Սերանօ եւ զաւակները Տէր եւ Տիկ. Փիթըր եւ Մէրի Սալիպեան եւ զաւակները

Տիգրան Ա. Երուանդունի Թագաւոր

Շարունակուած էջ 17-էն

խորհրդածելու երկու երկրներին միջեւ եղած դարաւոր ոչ սերտ յարաբերութիւններին մասին, ինչպէս՝ Մարաստանի գերիշխանութիւնը հայր Երուանդի թագաւորութեան հանդէպ: Արարչական, ազնուաբարոյ ծնունդով Արմէն-Հայ թագաւորը հաւատաց արեւելքի նենգ թագաւորին, հաւատացին պարսիկ թագաւորներին, հաւատացին Հռոմի ու Բիւզանդիոնի դաւադիր զօրավարներին ու կայսրերին, հաւատացին իրենց ցեղի վրիժառու «Պարթեւ»-ին, անբարոյ ու անօրէն թուրքին, որոնք խաբէցին նրանց, գերավարեցին, անմատչելի բերդերու մարգարեփակեցին, հայրենագրկեցին, սպաննեցին... եւ տանուլ տուին իրենց կռիւր: Հաւատաց Երուանդունի թագաւորը, քոյրը բացայայտեց եղբօր նկատմամբ մտադրուած դաւադրութիւնը:

Տիրամերեանը, քրոջը թագաւորավայել ճանապարհու մի Մարաստան: Աժդահակը, Տիրամերեանու գեղեցկութեան եւ իր նպատակադրած դաւադրութեան գործադրութեան համար նրան համարուած առաջին տիկինն ու թագուհի: Աժդահակ, առանց առաջին տիկին Տիրամերեանի թագուհիի համաձայնութեան ոչ մի բան չէր կատարում: Հրամայել էր, որ բոլորը նրա կարգադրութիւններին հնազանդէին: Այնուհետեւ, Աժդահակը փորձում է խաբէբայութեամբ գրաւել Տիրամերեանի թագաւոր սիրտը, նրան սսելով. «Դու չգիտես, որ քու եղբայր Տիրամերեանը նախանձել է, որ դու Արեւաց տիկին ես դարձել,

նրան գրգռում է կինը՝ Ջարուհին: Ինչ կը լինի սրա հետեւանքը, եթէ ոչ, նախ ես կը մեռնեմ եւ չետոյ Ջարուհին Արեւաց վրայ (տիկին) կը դառնայ եւ աստուածուհիներին տեղը կը բռնի: Ուրեմն քեզ մնում է ընտրել այս երկուսից մէկը, կամ լինել եղբայրասէր եւ յանձն առնել խայտառակ կործանում Արեւաց առաջ, կամ քոյ բարին հասկանալով մի օգտակար բան մտածես եւ առաջիկայ անցքերի մասին հոգաս»:

«Տիրամերեանին խորհում է, որ Աժդահակի խօսքում թաքնուած միտք կայ, որ եթէ չկատարի Աժդահակի թելադրանքը իրեն մահ է սպառնում եւ իր եղբօրը՝ Տիրամերեանի, նկատմամբ դաւաճանական արարք է նախապատրաստուած: Առանց կասկած յարուցանելու, սիրով խօսքերով պատասխանում է Աժդահակին: Հաւատարիմ մարդկանց միջոցով, Տիրամերեանին յայտնում Աժդահակի ծրագրած դաւադրութեան մասին»:

Աժդահակը, պատգամաւորներին միջոցով Տիրամերեանին տեղեկացնում, որ կարեւոր գործի համար երկու երկրներին սահմանազիւսին տեսակցութիւն կայանար իրարու հետ, եւ որ հնարաւոր չէր այն պատգամաւորների միջոցով փոխանցել: Տիրամերեան կռահելով Աժդահակի մտադրութիւնը, գրաւոր յայտնում նրա կողմից իր դէմ ծրագրուած դաւադրութեան մասին: Թշնամական յարաբերութիւններ են ստեղծուած Արմինա-Հայաստանի ու Մարաստանի միջեւ: Տիրամերեանը զօրք է հաւաքում կապաղովկիայի սահմանային շրջաններից, վրաստանի ու Ադուանքի ընտրեալներից եւ Մեծ ու

Փոքր Հայքերի քաջ մարդկանցից: Տիրամերեանը, իր բազմախումբ զօրաբանակով արշաւում Մարաստան: Աժդահակը, Մարաստանը դիմակայող վտանգը գնահատելով, հարկադրուած պատերազմել Տիրամերեանի դէմ: Տիրամերեանը մտահոգութեամբ քրոջ անվտանգութեան մասին, հինգ ամիս ձգձգում է գինական հակամարտութիւնը: Նա մտածում է միջոց գտնել քոյր Տիրամերեանու փրկելու մասին: Երբ, արդէն այն հնարաւոր էր համարել, սկսել էր ճակատամարտը, որը այնքան գեղեցիկ ու զգայացունց է նկարագրել Խորենացին, ահա այսպէս.

«Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակաւորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մէկը միւսին ամէն կերպ պատշաճեցրած, կատարելագեղեցիկ հասակով, առողջ եւ ուժի կողմից իրեն հաւասար չունեցող: Եւ ինչո՞ւ եմ խօսքս երկարացնում: Կոռու ժամանակ, Տիրամերեանը, Աժդահակի երկաթէ ամուր գրահը ինչպէս շուր ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է իր նիզակի ընդարձակ տէգին, եւ ձեռքը հետ քաշելիս՝ նրա թուրքի կէսն էլ գէնքի հետ դուրս բերում: Բայց կռիւն սքանչելի էր, որովհետեւ քաջեր քաջերի հանդիպելով՝ ոչ մէկը միւսին շուտով թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում ժամեր, մինչեւ վերջ դնում Աժդահակի մահուանը: Այս բարեբախտ դիպուածը փառք էր աւելացնում Տիրամերեանին» Պատմահայր Խորենացու մատենից այդ մի քանի մէջբերումները արեցի, որ ընթերցողը ըմբռնւնէր նրա զգայացունց պատմելու հրաշքը, իսկապէս նրա ոսկեղենիկ լեզուի անաղարտութիւնը ու հնչեղութիւնը, գեղեցիկ ու պատկերաւոր գրելաոճը, դէպքերը նկարագրելու զմայլանքը, անեղձ հայրենասէր ոգին, իսկ երբ բարձր կարող է մէջբերածս նրա գրաբար խօսքը, պիտի լսէք երգահանների արարած համանուագների կախարդանքների հնչիւնները: Կարդացէ՛ք, պիտի զմայլէք, պիտի հայանաք, փափաք պիտի առջանար ընթերցելու ամբողջ մատենանը՝ ցեղիդ ծննդեան տարեգիրքը:

Պատերազմը վերջանալուց յետոյ, Տիրամերեանը իր քոյր Տիրամերեանու Աժդահակի պալատից մեծ բազմութեամբ ու թագաւորավայել կերպով ուղարկել իր անուկով կառուցած Տիրամերեան քաղաք: Հրամայել, մօտակայ գաւառները իր ծառայութեան մէջ դնել: Տիրամերեանը երկար թագաւորել է, երկիրը շինացրել, գանձարանը լցրել ոսկով, արծաթով: Աժդահակի առաջին կին՝ Անուշին, Աժդահակի

սերունդից աղջիկ գաւակները, աւելի քան մէկ բիւր գերիներին բազմութեամբ բնակեցրել մեծ լեռան արեւելեան կողմը՝ մինչեւ Գողթն գաւառի սահմանները: Երեմեա մարգարէն խնդրել էր Եհովայից, առանց նշելու ազգերի անունները, հիւսիսի մեծ ազգերի բնակներին բերել, կործանելու Բաբելոնը, գերութիւնից ազատել հրեաներին: Պատմական ճշմարտութիւն է, որ մ.թ.ա. 537 թուականին, Կիւրոսը, Արմինայի զօրաբանակների հետ գրաւել էին Բաբելոնը:

Արմինա-Հայաստան արարչական երկրի պատմութիւնը ինչքան ճշմարտութիւններ ունի, Արմինա-Հայ ցեղի մարդկանց իմաստութեան լոյսի ջահերը աշխարհում վառելու: Իրենց արարչական երկիրն է հնդեւրոպացի մարդանց բնօրրանը, իրենց հետ տարած իմաստութիւնը՝ նրանց նոր բնակած երկրներում նոր քաղաքակրթութիւն սկզբնաւորել: Այրուձիի, հետեւակի զօրաբանակները երկրում ու այլուր յաղթական մարտեր մղել: Արմինայի երկրի աստուածների բարեպաշտութիւնը աշխարհում նոր հաւատքի լոյս բռնկել: Արմինա-Հայաստանի Տիրամերեան թագաւորի առաջնորդած զօրաբանակները, Պարսկաստանի Կիւրոս արքայի զօրքի հետ նուաճել են անօրէնների երկիր Բաբելոնը, քանդել նրա հաստակառոյց պարսպները, կործանել քաղաքը, նրա փլած աշտարակի բեկորները լցրել Բաբելոնի քաղաքամէջով անցնող՝ արարչական դրախտիկ երկրի լանջերից հոսած Եփրատ գետի ջրեր: Կիւրոս հրամայել է ազատութիւն շնորհել Բաբելոնի գերավարած ժողովուրդներին, նրանց արտօնել իրենց երկրներ վերագաւառել: Գերավարուած Հրեայ բազմախումբ մարդիկ տուն են վերադարձել, Կիւրոս արքան վերաշինել է Երուսաղէմի քանդուած տաճարը: Հրեաները իրենց հին մատենանում աքեմենեանների Կիւրոս արքային հուշակել էին իրենց ազգի ազատարար-փրկարար... առանց իրենց ազատարար մարտերի վճռական մասնակից Արմինա-Հայերին յիշատակելու:

Կիրակի հանգստեան օրերին, ընտանիքներով գնում Սեւանի ափեր, փոքրերը, մեծերը լողանում, ապա շափուռներին շարած միս էին դնում կրակի վրայ, խորոված, հաւաքում, նստում գետին, ճաշակում, բնութեան մէջ խորոված միսը շատ համեղ է: Բարձր լեռներ գօտեւորել էին Սեւանը, հարցրի գիտէ՞ի՞նք արդեօք այդ ամենաբարձր լեռան անունը, ոչ մէկ պատասխան, պատմել էին այդ Աժդահակի դէպքը, հայեր այդպէս էին կոչել այն, որ յաւետ մրսէր...:

Պատմութիւնը Խթան Գոյատեւումի

Շարունակուած էջ 13-էն

միայն մեր գաղափարական-քաղաքական աշխարհահայեցողքով, այլ պէտք է տարածել մշակութի եւ արուեստի բոլոր մարգերուն վրայ՝ զանոնք պատուաստելով ժամանակի ոգիին հետ: Որպէսզի հայկական աւանդ-

ներով հարստացած ներկայ եւ ապագայ սերունդները ո՛չ միայն լաւագոյնս պայքարին այլասերման վտանգին դէմ, այլեւ՝ անցեալի արժէքներով զինուած եւ սխալներէն դասեր քաղած սատարեն հայ ժողովուրդի եւ հայրենի պետականութեան հզօրացման սրբազան գործին:

Ձեր ծանուցումները Կատարեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Հայաստանը Աշխարհի Բաժակի Ձտուճի Մրցաշարը Աւարտեց Գրաւելով Խմբակի 4-րդ Տեղը



Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականը 2022 թուականի Աշխարհի Բաժակի գտուճի մրցաշարի վերջին՝ 10-րդ հանգրուանին 1:4 արդիւնքով պարտութիւն կրեց Գերմանիոյ դէմ եւ մրցաշարը աւարտեց 4-րդ դիրքի վրայ:

Երեւանի «Վազգէն Սարգսեանի» անուան հանրապետական մարզադաշտին վրայ կիրակի երեկոյեան կայացած հանդիպման երկու խաղակէսերուն հիւրերը 2-ական անգամ գրաւեցին դաշտի տէրերու բերդը: Հայաստանի միակ կողմի հեղինակը դարձաւ խումբի աւագ Հենրիխ Մխիթարեանը 59-րդ վայրկեանին՝ 11-մեթրանոցէն:

Այսպիսով, Հայաստանի հաւաքականը մրցաշարին հաւաքեց 12 կէտ, որմէ 9-ը՝ առաջին երեք հանդիպումներուն արձանագրած յաջորդական երեք յաղթանակներուն շնորհիւ: Մնացած 7 խաղերուն խուբը ապահովեց ընդամենը 3 կէտ՝ չյաղթելով խաղերէն ոչ մէկը, 3 խաղ աւարտելով հաւասար արդիւնքով:

4 խմբակի առաջին դիրքը գրաւեց աշխարհի քառակի ախոյեան Գերմանիան՝ 27 կէտով: Երկրորդ տեղը գրաւեց եւ պայքարը շարունակելու հնարաւորութիւնը պահպանեց Հիւսիսային Մակեդոնիան՝ 18 կէտով: Ռուսիան 17 կէտով երրորդն է, Հայաստան 9 կէտով 4-րդն է, որուն կը յաջորդէ Իսլանտան եւ ապա մէկ կէտով կ'եզրափակէ Լիխտենշտեյնը:

Եւրոպական 10 Երկիրներ Արդէն Իսկ Հասան Աւարտականներուն

Երեքշաբթի օր յայտնի դարձան Աշխարհի Բաժակի աւարտականներուն մասնակցելու արդէն իսկ իրաւունք ստացած եւրոպական երկիրները:

Սերպիան, Սլովենիան, Չեխիան, Տանիմարքը, Պելճիքան, Ֆրանսան, Խրուակիան, Գերմանիան, Անգլիան եւ Հոլանտան կը մասնակցին 2022-ի աշնան Քաթարի մէջ տեղի ունենալիք աւարտական խաղերուն:

Խմբակներէն ներս երկրորդ տեղը գրաւած 10 երկիրներ՝ Սկոտլանդ, Ռուսաստան, Փորթուգալ, Իտալիա, Թուրքիա, Շուէտ, Կալէս (Ուելզ), Լեհաստան, Հիւսիսային Մակեդոնիա, Ուքրանիա, առաւել Չեխիա եւ Աւստրիա կը մասնակցին գարնան տեղի ունենալիք անցումային (փլէյ-օֆֆ) խաղերուն:



Ֆրանսան Յաղթեց 8:0 Եւ Նուաճեց Ուղեգիրը, Պելճիքան Նոյնպէս Առաջինն Է Խումբին Մէջ

Աշխարհի առաջնութեան եւրոպական գօտիի ընտրական մրցաշարին աւարտեցաւ նախավերջին խաղաշրջանը:

Ը խումբին աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականը նախավերջին խաղին 8:0 հաշուով յաղթեց Ղազախստանի խումբին եւ 15 միաւորով գրաւեց առաջին տեղը ու նուաճեց եզրափակիչ մրցաշարի ուղեգիրը: Այս խաղին 4 կոլ խփեց ՊՄԺ-ի յարձակող կիլիան Մբայեն, որ առաջին անգամ հաւաքականին դարձաւ պոկերի հեղինակ: 2 կոլ ալ խփեց Մադրիդի «Ռեալի» յարձակող Քարիմ Բենզեման: Աչքի ինկան նաեւ Թուրինի «Յուվենտուսի» կիսապաշտպան Ադրիէն Ռաբլոն ու Մադրիդի «Աթլետիկոյի» յարձակող Անտուան Գրիզմանը:



Ե խումբին առաջին տեղն ու ուղեգիրն ապահովեց Պելճիքայի հաւաքականը, որ տանը 3:1 հաշուով պարտութեան մատնեց Էսթոնիայի խումբին եւ վաստակեցաւ 19 միաւոր: Երկրորդ տեղը 14 միաւորով Ուելսի հաւաքականն է, որ 5:1 հաշուով յաղթեց Պելառուսի խումբին:

Միացեալ Նահանգները Յաղթեց Սերպիային, Հաւասարեցաւ Ճամայքայի Հետ

Աշխարհի Բաժակի հիւսիսային եւ կեդրոնական ամերիկաներու երկիրներու խմբակի գտուճի մրցաշարի ծիրէն ներս, Միացեալ Նահանգներու ազգային խումբը ունեցաւ երկու խաղ: Առաջինին Ամերիկացիք Սինսինատիի մէջ՝ 2:0 արդիւնքով տպաւորիչ յաղթանակ արձանագրեցին Սերպիայի դէմ: Երեքշաբթի օր, խմբակի վերջին դիրքը գրաւող Ճամայքայի ետ բաւարարուեցան 1:1 արդիւնքով: Մրցակիցի դաշտին վրայ կայացած այս խաղի հաւասար արդիւնքով Ամերիկա կորսնցուց լաւ առիթ՝ ամրապնդելու իր դիրքը, որպէս խմբակի առաջատար:

Նոյն օր խմբակէն ներս արձանագրուեցան նաեւ հետեւեալ արդիւնքները.

Փանամա-Սալվատոր	2-1
Քուսթա Ռիքա-Հոնտուրաս	2-1
Գանատա-Մեքսիքա	2-1
Դասաւորում	
1.- Գանատա	16 կէտ
2.- Միացեալ Նահանգներ	15 կէտ
3.- Մեքսիքա	14 կէտ
4.- Փանամա	14 կէտ
5.- Քուսթա Ռիքա	9 կէտ
6.- Ճամայքա	7 կէտ
7.- Սալվատոր	6 կէտ
8.- Հոնտուրաս	3 կէտ

Սպանիան Ու Սերպիան Հասան Աշխարհի Բաժակի Աւարտականներուն



Ֆուտպոլի աշխարհի Բաժակի եւրոպայի A խմբակէն ներս, վերջին հաւանգրուանին փորթուգալի հաւաքականն ընդունեց սերպերուն եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

Սերպիան 20 կէտով գրաւեց խմբակի առաջին տեղը ու նուաճեց աւարտականներու ուղեգիրը: Փորթուգալ 17 կէտով երկրորդն է եւ ուղեգրի համար անցումային (փլէյ-օֆֆ) ծաղկերու::

Ե խումբակէն ներս Սպանիայի հաւաքականը սեփական դաշտին վրայ նուազագոյն հաշուով յաղթանակ տարաւ շուէտի նկատմամբ: Խաղի վերջին վայրկեաններուն յաղթական կողմի հեղինակ դարձաւ Թուրինի «Եուվենտուսի» յարձակող Ալբարո Մորատան:

Սպանիան 19 կէտով գրաւեց առաջին տեղը ու նուաճեց ուղեգիրը: Շուէտ 15 միաւորով երկրորդն է եւ պէտք չարունակէ պայքարը մասնակցելով անցումային խաղերու:

Խրուակիան Յաղթեց Ռուսերուն Եւ Հասաւ Աշխարհի Բաժակի Աւարտականներուն

Group H	Played	Won	Drawn	Lost	For	Against	Goal difference	Points
Croatia	10	7	2	1	21	4	17	23
Russia	10	7	1	2	19	6	13	22
Slovakia	10	3	5	2	17	10	7	14
Slovenia	10	4	2	4	13	12	1	14
Cyprus	10	1	2	7	4	21	-17	5
Malta	10	1	2	7	9	30	-21	5

Խրուակիայի հաւաքականը Աշխարհի Բաժակի գտուճներուն գծով H խմբակի վերջին հանգրուանին սեփական դաշտի վրայ 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռուսաստանի հաւաքականին եւ խմբակին մէջ 23 կէտով գրաւեց առաջին տեղը եւ նուաճեց 2022-ին Քաթարի մէջ տեղի ունենալիք աւարտական մրցաշարի ուղեգիրը:

Ռուսաստանի հաւաքականը 22 կէտով գրաւեց երկրորդ տեղը եւ կը մասնակցի անցումային հանդիպումներու: